



German Financial Cooperation
with Armenia

ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ



**«Շիրակ-Ջրմուղկոյուղի» ՓԲԸ, ներկայումս՝ «Ջրային ոլորտի
ծրագրերի իրականացման գրասենյակ», ՀՀ Ջրային տնտեսության
պետական կոմիտե**

Գերմանիայի և Հայաստանի միջև ֆինանսական համագործակցություն,
Եվրոպական Ներդրումային Բանկ (ԵՆԲ),
ԵՄ Հարևանության Ներդրումային Գործիք (ՀՆԳ) և
Հայաստանի Հանրապետություն

**ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔԻ ԾՐԱԳԻՐ (ՀԵԾ) II,
ՓՈԻԼ 3 - ՀԱՅԱՍՏԱՆ, ՋՐԱՄԱՏԱԿԱՐԱՐՈՒՄ ԵՎ ՋՐԱՀԵՌԱՑՈՒՄ
ՀԵԾ II-Փ3-Շ**

**Լոտ 1- «Շիրակ-Ջրմուղկոյուղի» ՓԲԸ-ի սպասարկման տարածքում
գտնվող ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերի
նախագծում, տեխնիկական և հեղինակային վերահսկողություն**

**ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ
ԳՆԱՀԱՏՈՒՄ**

Լոտ 1.3 - Շիրակի մարզի գյուղեր և Գյումրի քաղաքի կոյուղու համակարգ

ՆԱԽՆԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՅՏ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. ԾՐԱԳՐԻ ՆԱԽԱՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ	5
1.1. Քաղաքականություն, իրավական և ինստիտուցիոնալ հիմքեր	5
1.1.1. Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատմանն ու կառավարմանն առնչվող ՀՀ օրենսդրություն	5
1.1.2. Հայաստանի Հանրապետության և միջազգային նորմերի համեմատական վերլուծություն (ԵՆԲ, KfW Զարգացման բանկ, ՀԲ)	11
2. ԵԼԱԿԵՏԱՅԻՆ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ	15
2.1. Բնակավայրերի աշխարհագրական դիրքը և կլիմայական պայմանները	15
➤ Գյումրի քաղաքային համայնք.....	15
➤ Ախուրիկ գյուղական համայնք	16
➤ Առափի գյուղական համայնք.....	16
➤ Այգաբաց գյուղական համայնք	17
➤ Բայանդուր գյուղական համայնք	17
➤ Գետք գյուղական համայնք.....	18
➤ Ղարիբջանյան գյուղական համայնք.....	18
➤ Հացիկ գյուղական համայնք	18
➤ Հայկավան գյուղական համայնք.....	19
➤ Կապս գյուղական համայնք.....	19
➤ Վահրամաբերդ գյուղական համայնք.....	20
➤ Ոսկեհասկ գյուղական համայնք	20
➤ Երազգավորս գյուղական համայնք	21
2.2. Կենսաբազմազանություն և հատուկ պահպանվող տարածքներ	21
3. ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐԸ	23
3.1. Ջրամատակարարման և ջրահեռացման գոյություն ունեցող համակարգերի նկարագրություն	23
3.1.1. Գյումրի քաղաքի ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերի ընդհանուր նկարագրություն	23
3.1.2. Գյուղական բնակավայրեր ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերի ընդհանուր նկարագրություն	24
3.2. Նախատեսվող գործունեության նկարագրություն.....	28
3.3. Բնակչության և նախատեսված աշխատանքների համար կանխատեսվող ջրապահանջ ..	32
4. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՆԱՍՏԱԿԱՐ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԲԱՑԱՌՄԱՆ ՈՒ ՆՎԱԶԵՑՄԱՆ ՈՒՂՎԱԾ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ	34
4.1. ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՈՒ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ	34
4.2. ԹԱՓՈՆՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ	35
5. ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ	37
6. ԱԶԴԱԿԻՐ ՀԱՆՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ ԲՈՂՈՔՆԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ՄԵԽԱՆԻԶՄ	37

ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ

ՀԱՎԵԼՎԱԾ 1. Շրջակա միջավայրի կառավարման պլան	39
ՀԱՎԵԼՎԱԾ 2. Շիրակի մարզի ջրամատակարարման համակարգի գլխավոր հատակագիծ	46
ՀԱՎԵԼՎԱԾ 3. Գյումրի քաղաքում կոյուղագծերի փոխարինման տարածքների տեղադրություն ...	47
ՀԱՎԵԼՎԱԾ 4. Շիրակի մարզի 12 գյուղերի ջրամատակարարման համակարգերի բարելավման տեխնիկական լուծումների մանրամասներ	48
ՀԱՎԵԼՎԱԾ 6. Բնապահպանական խորհրդատվությունների արձանագրություններ նմասնակիցների ցուցակներ	60
ՀԱՎԵԼՎԱԾ 7. Բնապահպանական խորհրդատվությունների մասնակիցների ցուցակներ.....	60
ՀԱՎԵԼՎԱԾ 8. Բողոքների ներկայացման ձևաթերթ	61
ՀԱՎԵԼՎԱԾ 9. Բողոքների գրանցման մատյան.....	62

ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐԻ ՑԱՆԿ

ԵՆԲ	Եվրոպական ներդրումային բանկ
ԵՄ-ՀՆԳ	Եվրամիության հարևանության ներդրումային գործիք
ԾԻԳ	Ծրագրերի իրականացման գրասենյակ
KfW	KfW Զարգացման Բանկ
ՀԵԾ	Համայնքային ենթածրագրերի ծրագիր
ՀՀ	Հայաստանի Հանրապետություն
ՀՀ ԱԻՆ	ՀՀ Արտակարգ իրավիճակների նախարարություն
ՀՀ ԱՆ	ՀՀ Առողջապահության նախարարություն
ՀՀ ԲՆ	ՀՀ Բնապահպանության նախարարություն
ՃԻՋ	Ճնշում իջեցնող ջրավազան
ՃԿՓ	Ճնշման կարգավորիչ փական
ՄԱԿ ԵՏՀ	Միացյալ ազգերի կազմակերպության եվրոպայի տնտեսական հանձնաժողով
ՇԿՆՊ	Շահագրգիռ կողմերի ներգադման պլան
ՇՄԱԳ	Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատում
ՇՄԿՊ	Շրջակա միջավայրի կառավարման պլան
ՋՏՊԿ	Զրային տնտեսության պետական կոմիտե
ՊՈԱԿ	Պետական ոչ առևտրային կազմակերպություն
ՓԲԸ	Փակ բաժնետիրական ընկերություն

1. ԾՐԱԳՐԻ ՆԱԽԱՊԱՏՍՈՒԹՅՈՒՆ

Սույն հաշվետվությունն իրենից ներկայացնում է «Բնապահպանական և սոցիալական ազդեցության գնահատման» հաշվետվություն՝ կազմված «Շիրակ Զրմուղկոյուղի» Փակ Բաժնետիրական Ընկերության (ՇՋԿԸ ՓԲԸ) սպասարկման տարածքում ջրամատակարարման և ջրահեռացման ծառայությունների վերականգնման աշխատանքների համար: Ծրագիրը հանդիսանում է Համայնքային Ենթակառուցվածքների Ծրագրի /ՀԵԾ/ II, Փուլ 3-ի մաս, որը ներկայումս կառավարվում է «Ջրային տնտեսության պետական կոմիտեի» ներքո գործող Ջրային ոլորտի ծրագրերի իրականացման գրասենյակի կողմից:

Ծրագիրը ֆինանսավորվում է KfW, ԵՄ-ԵՆԲ և Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից: Նախորդ փուլերով (Փուլ 1 և 2) նախատեսված էր նոր ջրամբարների կառուցում և բաշխիչ ցանցի 50%- ից ավելի փոխարինում Գյումրի քաղաքի տարածքում, ինչպես նաև երեք հարակից գյուղերում: Ծրագրի երրորդ փուլն ընդգրկում է Գյումրի քաղաքի տարածքը և հարակից 12 գյուղերը, որի նպատակն է բարելավել խմելու ջրամատակարարման և կոյուղու համակարգերը և իրականացնել շարունակական, շուրջօրյա, ապահով և հիգիենիկ ջրամատակարարում՝ դրանով բարձրացնելով տվյալ տարածքում բնակչության կենսական և առողջական պայմանները:

Ծրագիրն ընդգրկում է ջրամատակարարման ցանցի վերակառուցում, նորացում ու ընդլայնում, ինչպես նաև կոյուղու համակարգին առնչվող որոշ հրատապ միջոցառումներ Շիրակ Զրմուղ-կոյուղու սպասարկման տարածքում: Փուլ III-ի Լոտ 1.3-ի շրջանակներում նախատեսված աշխատանքները վերաբերում է Շիրակի մարզի 12 գյուղերին և Գյումրի քաղաքի կոյուղու համակարգին՝ գյուղական համայնքներում ջրամատակարարման բաշխիչ ցանցերի փոխարինում, նոր բաշխիչ համակարգերի կառուցում և Գյումրի քաղաքի տարածքում մոտ 5 կմ երկարությամբ գոյություն ունեցող կոյուղագծերի փոխարինում:

1.1. Քաղաքականություն, իրավական և ինստիտուցիոնալ հիմքեր

1.1.1. Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատմանն ու կառավարմանն առնչվող ՀՀ օրենսդրություն

Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին օրենսդրությունը բաղկացած է ՀՀ սահմանադրությունից, Հայաստանի Հանրապետության մասնակցությամբ միջազգային պայմանագրերից, «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքից և նրանից բխող ենթաօրենսդրական ակտերից, ինչպես նաև իրավական այլ ակտերից:

1995թ. ընդունվեց ՀՀ Սահմանադրությունը, որի 10-րդ հոդվածը սահմանում է պետության պատասխանատվությունը շրջակա միջավայրի պահպանության և վերարտադրության, բնական պաշարների բնական օգտագործման վերաբերյալ:

Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման համակարգը ՀՀ-ում կառավարվում է «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքով (2014թ.): Սույն օրենքը կարգավորում է ՀՀ-ում շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և շրջակա միջավայրի վրա ազդեցության պետական փորձաքննության ոլորտի հասարակական հարաբերությունները:

Շրջակա միջավայրի պահպանությունն ու բնական ռեսուրսների օգտագործումը կարգավորող գործող օրենսդրական դաշտը ներառում է նաև բազմաթիվ իրավական ակտեր: ՀՀ Կառավարության որոշումները բնապահպանական օրենքների գործողության հիմնական իրավական լծակներն են: Ոլորտը կարգավորվում է նաև ՀՀ նախագահի, վարչապետի և նախարարների որոշումներով և հրամաններով:

Աղյուսակ 1-ում հակիրճ ներկայացվում են այն օրենքների հիմնադրույթները, որոնք առնչվում են ջրամատակարարման համակարգերի հուսալիության և արդյունավետության ծրագրի տարբեր բաղադրիչների իրականացման հետ՝ մասնավորապես Գյումրի քաղաքի և հարակից գյուղերի ջրամատակարարման համակարգի վերականգնման ծրագրի բնապահպանական և սոցիալական վերլուծության հարցերին:

Հայաստանի Հանրապետությունը ստորագրել և վավերացրել է նաև շրջակա միջավայրի պահպանությանը վերաբերող մի շարք միջազգային կոնվենցիաներ և արձանագրություններ, որոնք ներկայացված են աղյուսակ 2-ում: Ընդգծվածներն ամենաշատն են առնչվում սույն նախագծի բնապահպանական նախնական գնության և ազդեցության գնահատման (ՇՄԱԳ) հետ:

Սույն հաշվետվությունը մշակվել է ՀՀ համապատասխան օրենսդրության ու նորմատիվային ակտերի (աղյուսակ 1), ինչպես նաև միջազգային համաձայնագրերով ստանձնած ՀՀ պարտավորությունների (աղյուսակ 2) համաձայն: Հաշվետվության մեջ հաշվի են առնվել նաև շինարարական ոլորտը կարգավորող մի շարք օրենքներ և ենթաօրենսդրական ակտեր, որոնք սահմանում են շինարարական նորմերն ու չափանիշները (СНП-եր), ինչպես նաև «Պետության և հասարակության կարիքների համար սեփականության օտարման մասին» ՀՀ օրենքը (2006թ.):

Սույն հաշվետվության գնահատման աշխատանքներն իրականացվել են հիմնվելով «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքի (21 հունիսի, 2014) համապատասխան դրույթների վրա: Վերջինիս համաձայն նախատեսվող գործունեությունը դասակարգվել է որպես «Գ» կատեգորիայի գործունեության տեսակ՝ փորձաքննության նախնական փուլին ներկայացվող շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտի պահանջներին համապատասխան, ըստ որի փորձաքննությունն իրականացվում է մեկ /նախնական/ փուլով:

Շրջակա միջավայրի պահպանության վերաբերյալ այլ օրենքների դրույթներ ևս հաշվի են առնվել սույն հաշվետվության գնահատման ժամանակ: Դրանք առնչվում են բնապահպանական հատուկ պահպանվող տարածքներին, մթնոլորտային օդի պահպանությանը, մշակութային և պատմության հուշարձաններին, բուսական և կենդանական աշխարհին, ջրային ռեսուրսների պահպանությանը, թափոնների կառավարմանը, աշխատողների աշխատանքային անվտանգության և սանիտարահիգիենիկ պայմանների ապահովմանը:

Նախատեսվող աշխատանքների իրականացման ընթացքում առաջացող հնարավոր ազդեցությունները կկանխարգելվեն և/կամ կնվազեցվեն շրջակա միջավայրի ազդեցությունը մեղմացնող միջոցառումների ժամանակին և ճիշտ իրականացման արդյունքում, որոնք մանրամասն ներկայացված են ՇՄԿՊ-ում՝ [Հավելված 1](#):

Նախնական գնահատման հաշվետվությունը ներառում է ծրագրի իրականացման տարբեր փուլերում (շինարարություն, շահագործում) հնարավոր ազդեցությունները շրջակա միջավայրի, ինչպես նաև բնակչության տարբեր խավերի վրա:

Աղյուսակ 1. Հայաստանի Հանրապետության շրջակա միջավայրի պահպանության ոլորտի օրենսդրություն

No.	Անվանում	Կարգավորման ոլորտը
1.	«Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքը (2014)	«Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքը բաղկացած է ՀՀ-ում տարբեր բնության ծրագրերի և գործունեությունների համար ՇՄԱԳ-ի գործընթացի հիմնական քայլերից: Օրենքով սահմանվում են ընդհանուր իրավական, տնտեսական և կազմակերպական սկզբունքներ, որոնք նախատեսված են տարբեր ծրագրերի և ճյուղային զարգացման “հայեցակարգերի” պարտադիր անցկացվող ՇՄԱԳ-ի իրականացման և փորձագիտական եզրակացության տրման համար: Օրենքի 14-րդ հոդվածով սահմանվում են շրջակա միջավայրի վրա ազդեցության և շրջակա միջավայրի վրա ազդեցության ենթակա նախատեսվող գործունեության տեսակներն՝ ըստ բնագավառների, որոնք դասակարգվում են երեք կատեգորիայի՝ «Ա», «Բ», «Գ», ըստ շրջակա միջավայրի վրա նվազող ազդեցության աստիճանի: Որևէ տարածքի «հատուկ կարգավիճակը» նույնպես շրջակա միջավայրի վրա ազդեցության ուսումնասիրության անհրաժեշտություն է առաջացնում: Օրենքը հստակեցնում է ծանուցման, փաստաթղթավորման, հանրային խորհրդատվությունների և բողոքարկման ընթացակարգերը:
2.	«Բնության հատուկ պահպանվող արածքների մասին» ՀՀ օրենք (2006)	Սահմանում է հատուկ պահպանվող տարածքները, ինչպես նաև դրանց կառավարման ընթացակարգերը: Նախատեսում է հատուկ տարածքների որոշման և դրանք ղեկավարելու գործընթացները: Առանձնացվում է ՀՀ Պահպանվող հողատարածքների չորս տեսակ՝ պետական արգելոցներ, պետական պահուստավորման հողեր, ազգային պարկեր, բնական հուշարձաններ:
3.	«Պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների ու պատմական միջավայրի պահպանության և օգտագործման մասին» ՀՀ օրենք (1998)	Իրավական և քաղաքականության հիմքեր է ստեղծում ՀՀ տարածքում պատմամշակութային անշարժ հուշարձանների, պատմական միջավայրի պահպանության և օգտագործման համար ու կանոնակարգում է պահպանության և օգտագործման իրավահարաբերությունները: Օրենքի 15-րդ հոդվածը ներկայացնում է հուշարձանների բացահայտման և պետական գրանցման ընթացակարգերը, դրանց շուրջ պահպանման գոտիների գնահատման և պատմամշակութային արգելոցների ստեղծման ընթացակարգերը: 22-րդ հոդվածը պահանջում է նախքան հուշարձաններ պարունակող հողատարածքներում շինարարական, գյուղատնտեսական և այլ տիպի գործունեություն իրականացնելը ստանալ լիազորված մարմնի (Պատմական և մշակութային հուշարձանների պահպանության գործակալություն) հավանությունը:
4.	ՀՀ օրենք « Բուսական աշխարհի մասին» (1999), ՀՀ օրենք «Կենդանական աշխարհի մասին» (2000)	Հիմնականպատակը բուսական/կենդանական աշխարհի և կենսաբազմազանության պահպանության ապահովումն է, սահմանվում է ՀՀ բույսերի և կենդանիների պահպանության, պաշտպանության, օգտագործման, վերարտադրության և կառավարման, ինչպես նաև կենսաբազմազանության վրա մարդկանց գործունեության ազդեցությունը կարգավորելու քաղաքականություն, սահմանում է նաև տեսակների՝ մասնավորապես էնդեմիկ և վտանգված տեսակների, մոնիթորինգի և գնահատման ընթացակարգերը:
5.	«Մթնոլորտային օդի պահպանության մասին» ՀՀ օրենք (1994թ., լրամշակված՝ 2007թ.)	Այս օրենքը կարգավորում է արտանետման թույլտվությունները և սահմանում է մթնոլորտային օդի աղտոտման սահմանային թույլատրելի կոնցենտրացիաները: Աշխատավայրերում, բնակելի և հասարակական վայրերում, բնակարանային տնտեսության վայրերում, ինչպես նաև շինարարական հրապարակներում աղմուկի թույլատրելի սանիտարական նորմերը սահմանվում են ենթաօրենսդրական ակտով:
6.	«ՀՀ հողային օրենսգիրք» (2001)	սահմանում է պետական, այդ թվում՝ տարբեր նպատակային նշանակության (գյուղատնտեսական, շինարարական,

No.	Անվանում	Կարգավորման ոլորտը
		արդյունաբերական և այլ նպատակներով) հողերի օգտագործման դրույթները, ներառյալ էներգետիկայի, ջրային տնտեսության (ջրամատակարարում, ջրահեռացում, պոմպակայաններ, ջրամբարներ և այլն) և այլ նպատակներով հատկացվող հողերի օգտագործման հիմնադրույթները: Օրենսգիրքը սահմանում է հատուկ պահպանվող հողատարածքները, ինչպես նաև անտառածածկ, ջրածածկ և պահուստային հողերը: Այն նաև սահմանում է հողերի պահպանությանն ուղղված միջոցառումները, ինչպես նաև հողի նկատմամբ պետական մարմինների, տեղական ինքնակառավարման մարմինների և քաղաքացիների ունեցած իրավունքները: Ջրային հողեր են համարվում ջրային օբյեկտներով՝ գետերով, բնական և արհեստական ջրամբարներով, լճերով զբաղեցված, ինչպես նաև ջրային օբյեկտների օգտագործման և պահպանության համար անհրաժեշտ հիդրոտեխնիկական, ջրատնտեսային և այլ օբյեկտների համար առանձնացված տարածքները:
7.	«Հողօգտագործման և պահպանման վերահսկողության մասին» ՀՀ օրենքը (2008թ)	նախատեսում է ՀՀ հողերի պահպանության և արդյունավետ օգտագործման խնդիրներն ու ձևերը, սահմանում է հողային օրենսդրության և կառույցների նկատմամբ վերահսկողություն, հողերի օգտագործումն ու պահպանությունը հսկող մարմինների իրավունքներն ու պարտականությունները: Օրենքի գործողությունը տարածվում է ՀՀ Հողային Ֆոնդի բոլոր հողերի վրա՝ անկախ նպատակից, սեփականության ձևից և/կամ օգտագործման իրավունքից:
8.	«Ընդերքի մասին ՀՀ օրենսգիրք» (2011)	ի թիվս այլ հարցերի, սահմանում է հանքային ռեսուրսների և ստորգետնյա ջրերի օգտագործման և պահպանության հիմնական դրույթները, ներառյալ՝ ստորգետնյա ջրային ռեսուրսների սանիտարական պահպանության գոտիները:
9.	«ՀՀ ջրային օրենսգիրք» (2002)	հիմնական նպատակն է երկրի ջրային ռեսուրսների պահպանության, ջրային ռեսուրսների արդյունավետ կառավարման միջոցով քաղաքացիների և տնտեսության կարիքների բավարարման և ապագա սերունդների համար ջրային ռեսուրսների պահպանման համար իրավական հիմքերի ապահովումը: Անդրադառնում է հետևյալ առանցքային խնդիրներին՝ պետական և տեղական ինքնակառավարման մարմինների և հասարակության պարտավորությունների սահմանում, ջրի ազգային քաղաքականության և ջրի ազգային ծրագրի մշակում, պետական ջրային կադաստրի և մոնիթորինգի համակարգի ստեղծում, հանրության համար համապատասխան տեղեկատվության մատչելիության ապահովում, ջրային ռեսուրսների և ջրային համակարգերի օգտագործման թույլտվություն տրամադրող համակարգերի ստեղծում, անդրսահմանային ջրային ռեսուրսների օգտագործում, ջրի որակի չափանիշների սահմանում, հիդրոլոգիական կառուցվածքների շահագործման անվտանգության խնդիրներ, ջրային ռեսուրսների պահպանություն և պետական վերահսկողություն: 2002 թ. Ջրային օրենսգրքի ընդունումը մի շարք կանոնակարգերի և ընթացակարգերի ընդունման անհրաժեշտություն առաջացրեց, այդ թվում՝ թույլվությունների տրամադրման ընթացակարգեր, սանիտարական ելքեր, ցամաքորդային ջրի օգտագործում, ջրային ռեսուրսների այլընտրանքային հաշվառում, անդրսահմանային ջրային ռեսուրսների վերաբերյալ տեղեկատվության մատչելիություն, ձկնաբուծության նպատակներով ջրօգտագործում, ստորգետնյա ջրային ռեսուրսների պահպանություն, պետական ջրային կադաստրում փաստաթղթերի գրանցում, հանրության տեղեկացվածություն և Ջրային ռեսուրսների կառավարման գործակալության կողմից մշակված փաստաթղթերի հրապարակում, ինչպես նաև ջրային ոլորտին և բնապահպանական խնդիրներին առնչվող այլ ուղեցույցներ և նորմատիվ փաստաթղթեր:

No.	Անվանում	Կարգավորման ոլորտը
10.	«Թափոնների մասին» ՀՀ օրենք (2004)	սահմանում է թափոնների հավաքման, փոխադրման, պահման, մշակման, օգտահաման, ինչպես նաև շրջակա միջավայրի և մարդու առողջության վրա թափոններից առաջացող բացասական ազդեցությունների կանխարգելման հետ կապված իրավական և տնտեսական հիմքերը: Օրենքով սահմանում են նաև ոլորտի պետական լիազորված մարմինների իրավասությունները:
11.	ՀՀ օրենք «Ջրի ազգային քաղաքականության հիմնադրույթների մասին» (2005)	սահմանում է Հայաստանի Հանրապետության ջրային ռեսուրսների և ջրային համակարգերի պահպանության, ռազմավարական կառավարման և օգտագործման երկարաժամկետ զարգացման հայեցակարգը: Այն հստակեցնում է երկրի ջրային ոլորտի համապարփակ կառավարման և պլանավորման առանցքային սկզբունքները՝ սահմանելով առաջնահերթ խնդիրներն ու մոտեցումները:
12.	ՀՀ օրենք «Բնապահպանական վերահսկողության մասին» (2005)	կարգավորում է Հայաստանի Հանրապետությունում բնապահպանական օրենսդրության իրականացման նկատմամբ վերահսկողության կազմակերպման ու իրականացման հետ կապված հարցերը և սահմանում ՀՀ բնապահպանական օրենսդրության նորմերի իրականացման նկատմամբ վերահսկողության առանձնահատկությունների, համապատասխան ընթացակարգերի, պայմանների, դրանց հետ կապված հարաբերությունների, ինչպես նաև բնապահպանական վերահսկողության իրավական և տնտեսական հիմքերը:
13.	«ՀՀ Անտառային օրենսգիրք»(2005)	Կարգավորում է անտառների պահպանությունը, պաշտպանությունն ու կառավարումը:
14.	ՀՀ օրենք «Ջրի ազգային ծրագրի մասին» (2006)	հիմնական նպատակն է սահմանել Ջրային օրենսգրքով, Ջրի ազգային քաղաքականությամբ և Ծրագրով սահմանված հիմնական նպատակներին և խնդիրներին հասնելու համար նախատեսված կարճաժամկետ (մինչև 2010), միջնաժամկետ (2010-2015) և երկարաժամկետ (2015-2021) միջոցառումները: Օրենքը նախատեսում է հետևյալ առանցքային միջոցառումների իրականացումը. - միջոցառումների մշակում, որոնց նպատակն է ազգային ջրային պաշարի, ռազմավարական ջրային պաշարի, օգտագործելի ջրային ռեսուրսների սահմանումը և ազգային ջրային պաշարի ավելացումն ու պահպանությունը, ջրային համակարգերի դասակարգումը, պետական նշանակության ջրային համակարգերի չափանիշների սահմանումը, - ջրի պահանջարկի և առաջարկի գնահատում, - ջրային ռեսուրսների կուտակման/պահուստավորման, բաշխման և օգտագործման ռազմավարության մշակում, - միջոցառումների սահմանում՝ ուղղված ջրային նորմերի մշակմանը, էկոլոգիական/նվազագույն հոսքի ծավալի և սպառման համար օգտագործվող ջրի առավելագույն թույլատրելի սահմանների որոշմանը, հատուկ պահպանվող ավազանային տարածքների և արտակարգ էկոլոգիական իրավիճակների և աղետների գոտիների սահմանմանը, ջրային էկոհամակարգերի վրա բացասական ազդեցության կանխարգելմանը, ջրային ռեսուրսների մոնիթորինգի բարելավմանը և աղտոտման կանխարգելմանը, - Ջրի ազգային ծրագրի իրականացման համար ֆինանսական պահանջների և առաջարկվող ֆինանսավորման աղբյուրների սահմանում, - հանրության տեղեկացվածության ապահովում և այլն: “ՀՀ Ջրի ազգային ծրագրի մասին” ՀՀ օրենքը “դինամիկ” փաստաթուղթ է, որը պետք է պարբերաբար թարմացվի:

Աղյուսակ 2. ՀՀ կողմից ստորագրված և/կամ վավերացված բնապահպանական կոնվենցիաներ և արձանագրություններ

	Կոնվենցիայի կամ արձանագրության անվանումը և վայրը	Ստորագրվել է	Վավերացվել է
1.	«Միջազգային կարևորության խոնավ տարածքների մասին, հատկապես որպես ջրաթոշունների բնակավայր» կոնվենցիա (Ռամսար, 1971թ.)	1993	վավերացված է ԽՍՀՄ կողմից
2.	Կենսաբազմազանության մասին կոնվենցիա (Ռիո-դե-ժանեյրո, 1992)	1992	31/03/1993
3.	Կենսաբանական անվտանգության մասին Կարթագենյան արձանագրություն (Կարթագենա, 2000)	2000	15/03/2004
4.	Կլիմայի փոփոխության մասին ՄԱԿ-ի շրջանակային կոնվենցիան (Նյու Յորք, 1992)	1992	29/03/1993
5.	Կիոտոյի արձանագրություն (Կիոտո, 1997)		27/12/2002
6.	Մեծ հեռավորությունների վրա օդի անդրսահմանային աղտոտվածության մասին կոնվենցիա (ժնև, 1979)		14/05/1996
7.	«Անդրսահմանային ենթատեքստում շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման մասին» կոնվենցիա (Էսպո, 1991)		14/05/1996
	«Ռազմավարական էկոլոգիական գնահատման մասին» արձանագրություն (Կիև, 2003)	21/05/2003	
8.	Արդյունաբերական վթարների անդրսահմանային ազդեցությունների մասին կոնվենցիա (Շելսինկի, 1992)		14/05/1996
	Անդրսահմանային ջրերի վրա արդյունաբերական վթարների անդրսահմանային ներգործության արդյունքում պատճառած վնասի համար քաղաքացիական պատասխանատվության և փոխհատուցման մասին արձանագրություն (Կիև, 2003)	21/05/2003	
9.	Անապատացման դեմ պայքարի մասին ՄԱԿ-ի կոնվենցիա (Փարիզ, 1994)	1994	1997
10.	«Վտանգավոր թափոնների անդրսահմանային տեղափոխման և դրանց հեռացման նկատմամբ հսկողություն սահմանելու մասին» ՄԱԿ-ի կոնվենցիա (Բազել, 1989)		26/03/1999
	Օզոնային շերտի պահպանության մասին կոնվենցիա (Վիեննա, 1985)		28/04/1999
11.	Օզոնային շերտը քայքայող նյութերի մասին Մոնրեալի արձանագրություն (Մոնրեալ, 1987)		28/04/1999
12.	ՄԱԿ ԵՏՀ «Շրջակա միջավայրի հարցերի առնչությամբ տեղեկատվության հասանելիության, որոշումների ընդունելու գործընթացին հասարակության մասնակցության և արդարադատության մատչելիության մասին» կոնվենցիա (Օրիուս, 1998թ.)	1998	14/05/2001
13.	ՄԱԿ-ի «Միջազգային առևտրում առանձին վտանգավոր քիմիական նյութերի և պեստիցիդների վերաբերյալ նախնական հիմնավորված համաձայնության ընթացակարգի կիրառման մասին» կոնվենցիա (Ռոտերդամ, 1998թ.)	1998	22/10/2003
14.	«Միջազգային լճերի և անդրսահմանային ջրահոսքերի պահպանության և օգտագործման մասին» կոնվենցիա (Շելսինկի, 1992)	1999	
	«Ջրի և առողջության մասին» արձանագրություն (1999)	17/06/1999	
15.	«Կայուն օրգանական աղտոտիչների մասին» կոնվենցիա (Ստոկհոլմ, 2001)	23/05/2001	22/10/2003
16.	«Կայուն օրգանական աղտոտիչների մասին» արձանագրություն	14/12/1998	
17.	«Շրջակա միջավայրի փոխակերպման տեխնիկական միջոցների ռազմական կամ այլ կարգի թշնամական օգտագործումը արգելելու մասին» կոնվենցիա (ժնև, 1976թ.)		04/12/2001
18.	Լանդշաֆտների եվրոպական կոնվենցիա (Ֆլորենս, 2000)	14/05/2003	23/03/2004
19.	«Համաշխարհային մշակութային և բնական ժառանգության պահպանության մասին» կոնվենցիա (Փարիզ, 1972թ.)		22/06/1993
20.	Վայրի բնության և բնական միջավայրի պահպանության մասին Եվրոպայի կոնվենցիա (Բեռն, 1979)	13/03/2006	
21.	Հնագիտական ժառանգության պահպանության մասին Եվրոպական կոնվենցիա	18/06/2005	
22.	Ոչ նյութական մշակութային ժառանգության մասին կոնվենցիա		20/03/2006
23.	Ոչնչացման վտանգի տակ գտնվող վայրի կենդանական և բուսական աշխարհի տեսակների տարածման վայրերում միջազգային առևտրի մասին կոնվենցիա	1973	27/11/2010
24.	Ծանր մետաղների վերաբերյալ արձանագրություն	14/12/1998	
25.	Աղտոտիչների արտանետման և տեղափոխման ռեգիստրների մասին արձանագրություն (Կիև 2003)	21/05/2003	

1.1.2. Հայաստանի Հանրապետության և միջազգային նորմերի համեմատական վերլուծություն (ԵՆԲ, KfW Ձարգացման Բանկ, ՀԲ)

ԵՆԲ-ի, KfW Ձարգացման Բանկի, ՀԲ-ի և Հայաստանի Հանրապետության բնապահպանական և սոցիալական նորմատիվ պահանջների համեմատական վերլուծությունը ներկայացված է ստորև բերված աղյուսակում:

Աղյուսակ 3.1. Օրենսդրական պահանջների համեմատական վերլուծություն

ՀՀ օրենսդրություն	ԵՆԲ	KfW Ձարգացման Բանկ
«Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքը սահմանափակում է «ազդեցության տարածք» հասկացությունը՝ «ազդեցության ենթակա համայնք», -ով, որն, ըստ օրենքի, հնարավոր ազդեցության ենթակա համայնքի (համայնքների) բնակչությունն է՝ ֆիզիկական և (կամ) իրավաբանական անձինք:	Արդյունքները և ռիսկերը կվերլուծվեն ծրագրի ազդակի տարածքների համատեքստում: Ազդակի տարածքը ներառում է՝ (i) նախնական նախագծային շինհրապարակ (ներ) և հարակից կառույցներ, որոնք վարկառու / պատվիրատուն (այդ թվում, և իր կապալառուները) կառուցում կամ վերահսկում են, ինչպիսիք են խողովակաշարերը, ջրանցքները, թունելները, ճանապարհները, շինարարական ճամբարները, (ii) հարակից կառույցներ, որոնք չեն ֆինանսավորվում ծրագրի շրջանակներում:	ԵՆԲ-ին նույնատիպ
Նախատեսվող գործունեության տեսակները դասակարգվում են երեք կատեգորիայի՝ Ա, Բ, Գ՝ ըստ շրջակա միջավայրի վրա նվազող ազդեցության աստիճանի: 300 մմ և ավել տրամագծով, ինչպես նաև և 1կմ և ավել երկարությամբ խողովակաշարերի կառուցումը ներառված և ներկայցված են Գ կատեգորիայում:	Առաջարկվող նախագիծը դասակարգվում է որպես «Բ» կատեգորիա, եթե նրա հնարավոր բացասական բնապահպանական և սոցիալական ազդեցությունները կարող են հեշտությամբ հայտնաբերվել և կկիրառվեն մեղմացնող և /կամ վերականգնողական միջոցներ	Բ կատեգորիա: Առաջարկվող նախագիծը դասակարգվում է որպես Բ կատեգորիա, քանի որ չափավոր պոտենցիալ բացասական ազդեցությունները կամ ռիսկերը, որպես կանոն, կարող են մեղմվել հակազդող միջոցներով
Իրականացումն ապահովում է ծրագրի հիմնական բնապահպանական ասպեկտները, մասնավորապես, շրջակա միջավայրի վրա ծրագրի ունեցած ազդեցությունները և մեղմացնող միջոցառումների արդյունավետությունը: Նման տեղեկատվությունը հնարավորություն է տալիս վարկառուին և ՀԲ-ին՝ անհրաժեշտ ծրագրի շրջանակում, գնահատել մեղմացնող միջոցառումների հաջողությունը:	- ԲԿՊ- ում պետք է՝ - նկարագրել մոնիտորինգի միջոցառումները՝ տեխնիկական մանրամասների հետ, ներառյալ չափման պարամետրերը, օգտագործվող մեթոդները, նմուշառման վայրերը, չափումների հաճախականությունը, հայտնաբերման սահմանները և շեմերի սահմանումը, որոնք ազդարարում են ուղղիչ գործողությունների անհրաժեշտությունը: - նկարագրել մոնիտորինգի և հաշվետվական ընթացակարգերը, որոնք հարկավոր են մեղմիչ միջոցների կիրառման անհրաժեշտություն ունեցող պայմանների վաղ հայտնաբերման և մեղմիչ գործողությունների առաջընթացն ու արդյունքները փաստաթղթավորելու համար:	ԵՆԲ-ին նույնատիպ

ՇՄՄԱԳ-ն պետք է ամբողջությամբ համապատասխանի տարբեր պայմանագրերի պահանջներին, ՀՀ բոլոր օերնքներին և օրենսդրական կարգավորումներին, Աշխատանքային օրենսգրքի, անվտանգության ուղեցույցների, ինչպես նաև KfW / ԵՆԲ-ի չափանիշներին, եթե դրանք ավելի խիստ են, քան ՀՀ օրենսդրությամբ սահմանված պահանջներն ու կանոնակարգերը:

Աղյուսակ 3.2. Օրենսդրական պահանջների համեմատական վերլուծություն

ՀՀ օրենսդրություն	ՀՀ չափորոշիչներ
Միայն գրանցված սեփականատերերի հողի փոխհատուցում:	Անձանց, ովքեր չունեն իրավական գրանցման կարգավիճակ կտրամադրվի փոխհատուցում կամ ՏՔԾ-ի սահմանված կարգով կտրամադրվի տարաբնակեցման նպատակ:
Բոլոր տուժած տների/շենքերի համար տրվում է փոխհատուցում՝ Ծրագրի պատճառով շենքերի հասցած վնասների/քանդման համար, բացառությամբ չգրանցված առևտրային կառույցների:	ՀՀ քաղաքականությունը ներառում է փոխհատուցում այն կառույցների կորստի համար, որոնք գրանցված սեփականատեր կամ թույլտվություն չունեն (կառույցի նախնական արժեքը կանխիկ գումարի տեսքով + նյութերը փրկելու իրավունք + տեղափոխման ծախսեր + աշխատանքի տեղավորման ծախսեր, հմտությունների վերապատրաստում):
Կորցրած բերքի դիմաց փոխհատուցում կտրամադրվի միայն գրանցված սեփականատերերին:	Կորցրած բերքի դիմաց փոխհատուցում կտրամադրվի բոլոր ԾԱԵԱ-ներին:
Հողի գնահատումը հիմնված է ընթացիկ շուկայական արժեքի վրա հավելված/գումարած գնահատված արժեքի 15%-ը:	Վնասների գնահատման համար կիրառվող մեթոդաբանությունը հիմնված է փոխարինման արժեքի վրա:
Ազդեցությանների քանակական գնահատման / ծախսերի, իրավունքների և փոխհատուցվող գումարների, կամ ֆինանսական աջակցության վերաբերյալ տեղեկությունները պետք է ԾԱԵԱ-ներին ներկայացվի նախքան գնահատումը:	Նույնը
Ոչ մի դրույթ չի նախատեսվում զգալի ազդեցության ենթակա ԾԱԵԱ-ների կամ խոցելի խմբերի եկամտի կամ կենսաապահովման միջոցների վերականգման և/ կամ տարաբնակեցման ծախսերի համար:	ՀՀ քաղաքականությունը պահանջում է աջակցել ԾԱԵԱ-ներին կենսաապահովման և կենսամակարդակի բարելավմանն ուղղված ջանքերին, կամ առնվազն վերականգնել դրանք և հասցնել մինչ տեղահանության մակարդակը:
ՀՀ օրենքը չունի նախագծի մակարդակով որոշակի բողոքարկման մեխանիզմ, սակայն ՀՀ օրենսդրությամբ ԾԱԵԱ-ները կարող են դիմումներ, բողոքներ և առարկություններ ներկայացնել ձեռք բերողին և համապատասխան մարմիններին, ինչպես նաև բողոք ներկայացնել դատարան՝ ձեռք բերման գործընթացի յուրաքանչյուր փուլում: Անկախ «Պետության և պետության նպատակների համար սեփականության օտարման մասին» ՀՀ օրենքի պահանջից, յուրաքանչյուր անձ ըստ ՀՀ Մահմանադրության դրույթների իրավասու է պաշտպանել իր իրավունքները դատարանների և պետական մարմինների առջև: ՀՀ օրենսդրությամբ ԾԱԵԱ-ների հետ հանրային խորհրդակցություններ սահմանված չէ: Այնուամենայնիվ, ՀՀ օրենսդրությունը սահմանում է օտարման գործընթացի տարբեր փուլերում իրենց գործողությունների և իրավունքների վերաբերյալ ԾԱԵԱ-ների ծանուցման համար նախատեսված պայմանները, մասնավորապես..	Պետք է մշակվի և սահմանվի համապատասխան և հասանելի բողոքների լուծման մեխանիզմ: ԾԱԵԱ-ների և համայնքի համար պետք է անցկացնել խորհրդատվություններ և հնարավորություն ընձեռել նրանով մասնակցելու տարաբնակեցման ծրագրի պլանավորման և իրականացման գործընթացին: Նրանք պետք է տեղեկացված լինեն իրենց ունեցած տարբերակների և իրավունքների վերաբերյալ, որոնք առնչվում են տարաբնակեցմանը: ԲԼՄ գործընթացին վերաբերող ամբողջական տեղեկությունը ներառված է ՏՕԾ-ում:
Կառավարության կողմից սեփականությունը, որպես բացառիկ գերակա հանրային շահ ճանաչելու որոշումը ուժի մեջ մտնելուց հետո, օտարվող սեփականության վերաբերյալ կազմված արձանագրության մեկ օրինակը, օտարվող սեփականության ձեռք բերման պայմանագրի նախնական տարբերակի հետ միասին ուղարկվում է սեփականատիրոջը և օտարվող սեփականության նկատմամբ գույքային իրավունք ունեցող անձանց: Գույքը ձեռք բերողը պետք է փոխհատուցման ենթակա գումարը հանձնի դատարան կամ փոխանցի նոտարի դեպոզիտային հաշվին, որի համար էլ պետք է ներկայացնի տեղեկատվություն: Այն դեպքում, երբ գույք ձեռքբերողը իրականացնում է օտարվող գույքի նախնական ուսումնասիրություններ, ապա նա գույքի սեփականատիրոջը պետք է ներկայացնի համապատասխան տեղեկություններ ինչպես նյութական, այնպես իրավական հետևանքների և վարույթների վերաբերյալ՝ մինչ դրանք սկսելը:	

1.2. Ինստիտուցիոնալ հիմքեր

Ստորև համառոտ ներկայացվում են ՀՀ Շիրակի մարզում ջրամատակարարման վերականգնման ծրագրին բնապահպանության տեսանկյունից առնչվող պետական գերատեսչությունները և նրանց գործունեության շրջանակները:

➤ ՀՀ Բնապահպանության նախարարություն (ՀՀ ԲՆ)

ՀՀ ԲՆ պատասխանատու է բնական ռեսուրսների պահպանության, կայուն օգտագործման և վերարտադրության, ինչպես նաև շրջակա միջավայրի բարելավման համար: Այդ ոլորտներում ԲՆ՝ որպես լիազոր մարմնի լիազորություններն ընդգրկում են ազգային քաղաքականության մշակման վերահսկումը, բնապահպանական չափանիշների / ստանդարտների և ուղեցույցների մշակումը և կիրառումը:

➤ ՀՀ Արտակարգ իրավիճակների նախարարություն (ՀՀ ԱԻՆ)

Արտակարգ իրավիճակների դեպքում բնակչության պաշտպանության ոլորտում ՀՀ Կառավարության քաղաքականության մշակում և իրագործում: ԱԻՆն առընթեր գործող «Հայաստանի պետական հիդրոոդերևութաբանական մոնիթորինգի ծառայություն» ՊՈԱԿ-ն իրականացնում է ՀՀ օդերևութաբանական և հիդրոլոգիական պայմանների կանոնավոր մոնիթորինգ է:

➤ ՀՀ Էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարություն

Նախարարությանն առընթեր գործող Ջրային տնտեսության պետական կոմիտեն (ՋՏՊԿ) իրավասու է ջրային ոլորտում գործունեություն ծավալող ընկերությունների կառավարումը բարելավելու համար: ՋՏՊԿ-ն բարելավում է նաև սպառողների ջրամատակարարման ու ջրահեռացման ծառայությունները, իրականացնում ջրային ենթակառուցվածքների ու ջրամատակարարման հետ կապված հետագա բարեփոխումները: ՋՏՊԿ գործառույթներն են՝ մասնակցել ՀՀ ջրի ազգային քաղաքականության և ջրի ազգային ծրագրի մշակմանն ու իրականացմանը, ՀՀ կառավարությանը ջրօգտագործման և ջրօգտագործող ընկերությունների մասին տարեկան հաշվետվություններ ներկայացնել, իրականացնել պետական բաժնեմասի հավատարմագրված կառավարում այն կազմակերպություններում, որոնք ներգրավված են առևտրային գործընթացներում (ինչպես օրինակ՝ հիդրոտեխնիկական կառույցների շինարարություն և տեխնիկական շահագործում, ջրամատակարարում և ջրահեռացում ոռոգման, խմելու և կոյուղաջրերի սպասարկման ոլորտում, ինչպես նաև պետական հիմնարկներում, որոնք վերոնշյալ ոլորտներում արտերկրյա միջոցների հաշվին ներդրումային ծրագրեր են իրականացնում բնական և արհեստական ջրավազանների համար):

➤ ՀՀ Առողջապահության նախարարություն (ՀՀ ԱՆ)

ՀՀ ԱՆ Պետական հիգիենիկ և հակահամաճարակային ծառայությունը պատասխանատու է սանիտարական նորմերի և խմելու ջրի որակի ստանդարտների մշակման, առողջությանն առնչվող բոլոր տեսակի խնդիրների վերացման, կազմակերպությունների և քաղաքացիների կողմից սանիտարահիգիենիկ նորմերի պահպանման, և հակահամաճարակային միջոցառումների իրականացման վերահսկողության համար:

➤ ՀՀ Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն

ՀՀ Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը պատասխանատու է հետևյալ ոլորտներում պետական քաղաքականության, օրենսդրության և ծրագրերի մշակման և իրագործման հարցում. սոցիալական ապահովություն, աշխատուժ և զբաղվածություն, սոցիալական օգնություն, սոցիալական օգնություն հաշմանդամություն ունեցող մարդկանց և ծերերի նկատմամբ, ընտանիքների, կանանց և երեխաների սոցիալական պաշտպանվածություն:

➤ **Ջրի ազգային խորհուրդ**

Ջրի ազգային խորհուրդն իր վեճերը լուծող հանձնաժողովի հետ միասին, ջրային ոլորտի կառավարման բարձրագույն խորհրդատվական մարմինն է, որի կազմում ընդգրկված են մի շարք հիմնական շահագրգիռ նախարարությունների ներկայացուցիչներ՝ ՀՀ Վարչապետի նախագահությամբ: Ջրի ազգային խորհրդի հիմնական գործառույթներն են. ջրի ազգային քաղաքականության և ծրագրի, ինչպես նաև դրանց իրականացման միջացառումների վերաբերյալ առաջարկությունների մշակումը:

➤ **ՀՀ Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով**

Հանձնաժողովը պատասխանատու է ջրային հարաբերություններում սակագնային քաղաքականության մշակման և ջրային համակարգերի օգտագործման թույլտվությունների տրամադրման համար:

2. ԵԼԱԿԵՏԱՅԻՆ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ

2.1. Բնակավայրերի աշխարհագրական դիրքը և կլիմայական պայմանները

Ելակետային բնապահպանական պայմանների վերաբերյալ տվյալները հիմնված են բնապահպանական սկրինինգի ուսումնասիրությունների արդյունքների վրա:

Ուսումնասիրվող տարածքի ընդգրկվում է քաղաքային 1 և գյուղական 12 համայնքներ, որոնք բոլոր տեղակայված են ՀՀ Շիրակի մարզում:

Ոսկեհասկ, Երազգավորս, Ախուրիկ, Բայանդուր, Ղարիբջանյան և Գետք գյուղերը տեղակայված են մարզկենտրոնի Գյումրիից դեպի հարավ-արևմուտք՝ 5-16կմ հեռավորությունների վրա: Վահրամաբերդ գյուղը գտնվում է Գյումրի քաղաքից դեպի հյուսիս-արևմուտք և Կապս գյուղից դեպի հարավ: Ողջի և Հայկավան գյուղերը տեղակայված են մարզկենտրոն Գյումրիից դեպի հյուսիս-արևմուտք՝ 7-10 կմ հեռավորությունների վրա, իսկ Առափին՝ Գյումրիից 1 կմ դեպի արևմուտք:

Համաձայն ՀՀ սեյսմիկ գոտնորման քարտեզի այս բոլոր բնակավայրերը ընկած են տարածաշրջանում, որն ունի 0,4g արագացում և գտնվում է 9 բալ երկրաշարժերի հնարավոր ուժգնության գոտում:

Հիմնվելով կատարված ուսումնասիրությունների և ֆոնդային նյութերի տվյալների հիման վրա ուսումնասիրվող բնակավայրերում գրունտային ջրերի մակարդակները տատանվում են 2-10 մ և ավելի խորը մակարդակներում:

Ըստ Գյումրու տարածաշրջանի օդերևութաբանական կայանների դիտարկումների գրունտի սառեցման առավելագույն խորությունը ծրագրի բնակավայրերում կազմում է 1.39-1.42 մ:

Ստորև ներկայացվում են ծրագրում ընդգրկված բնակավայրերի աշխարհագրական դիրքն ու բնակլիմայական պայմաններն՝ ըստ ծրագրում ընդգրկված առանձին բնակավայրերի:

➤ *Գյումրի քաղաքային համայնք*

Գյումրի քաղաքը տեղակայված է Հայաստանի հյուսիս-արևմուտյան մասում, Ախուրյան գետի ձախ ափին, Շիրակի բարձրավանդակի կենտրոնական մասում՝ ծովի մակարդակից 1475-1605 մ նիշերի վրա:

Գյումրի քաղաքի հեռավորության մայրաքաղաք Երևանից շուրջ 120 կմ է: Քաղաքն ունի աշխարհագրական հարմար դիրք, որն ակոսվում է Չերքեզի, Ջաջուռի և այլ ձորերով: Ռելիեֆը հարթավայրային է, ծածկված լճագետային և հրաբխային շուրջ 350 մ խորության նստվածքներով: Քաղաքի ընդհանուր տարածքը կազմում է 4429 հա:

Գյումրին տարեկան ստանում է մոտ 2500 ժամ արեգակնային լույս և ջերմություն: Մեծ է հորդաբուխ աղբյուրների քանակը, որոնք միասին մեկ վայրկյանում տալիս են մոտ 1700 լիտր ջուր:

Շիրակի մարզը հանդիսանում է Հայաստանի ամենացրտաշունչ տարածաշրջանը: Կլիմայի ձևավորման հիմնական գործոններից են հյուսիսային և հյուսիս-արևմտյան օդային հոսանքները, որոնք նպաստում են ցուրտ եղանակի ձևավորմանը:

Տարածքը գտնվում է կլիմայական ցուրտ գոտում, որտեղ հունվարի միջին ջերմաստիճանը տատանվում է -5°C մինչև -12°C : Ձմեռը ցուրտ է, կայուն և երկարատև ձնածածկույթով: Ձմռանը երբեմն ուժեղ սառնամանիքներ են լինում, որոնց ժամանակ օդի ջերմաստիճանը հասնում է մինչև -41°C : Ամառը կարճ է՝ զով և խոնավ փոփոխական եղանակով: Հուլիսին միջին ամսական ջերմաստիճանը՝ 19°C է: Տարեկան տեղումների քանակը կազմում է 500-550մմ, ձյան ծածկույթի հաստությունը հասնում է 61սմ, հողի սառչելու խորությունը՝ մինչև 110սմ: Քամու միջին արագությունը 3.0-6.0մ/վրկ, գերակշռում են արևելյան ուղղության քամիները:

Գեոմորֆոլոգիական տեսակետից հետազոտվող տարածքը տեղադրված է երզնիոնահողմնահարման լանջերի և հարավային սարավանդի սահմաններում: Տարածքի երկրաբանական կառուցվածքին մասնակցում են չորրորդականի հասակի հրաբխային տուֆերը,

բազալտները, անդեզիտաբազալտները և դացիտային լավաները, ծածկված ժամանակակից ալյուվիալ, էյուվիալ-դեյուվիալ, դեյուվիալ-պրոյուվիալ և էյուվիալ առաջացումներով՝ ավազային, կավային և խոշորաբեկորային գրունտներով: Տարածքը հարուստ է շինանյութերով՝ տուֆով, բազալտով, դիատոմիտով, կավով, սևահողային արգավանդ դաշտերով:

Հիդրոերկրաբանական տեսակետից շրջանում և տարածքում լայն տարածում ունեն պալեոգենի ապարների հետ կապված ստորերկրյա ջրերը, որոնք պատկանում են ճեղքային ջրերի տարատեսակներին: Ստորերկրյա ջրերի սնուցումը կատարվում է հալոցքային և մթնոլորտային տեղումների ջրերի ներծծման հաշվին:

➤ *Ախուրիկ գյուղական համայնք*

Ախուրիկ համայնքը Շիրակի մարզի գյուղերից է, որն ընդգրկում է Վարդանաշուր և Ախուրիկ գետակների գետաբերանային հատվածները, որտեղ միանում են Ախուրյան գետին, նրանց միջև ընկած ավամերձ տարածքը:

Կլիման լեռնացամաքային է, որը բնորոշվում է զով և հարաբերական խոնավությամբ ամառով, խիստ ցուրտ ձմեռով, որն ուղեկցվում է բարձր խոնավությամբ և ուժեղ քամիներով՝ 5-7 մ/վ արագությամբ: Հուլիս ամսվա միջին ամսական ջերմաստիճանը 16°C է, իսկ հունվարին՝ -5 -12°C է, օդի հարաբերական խոնավությունը՝ 70%, տարեկան տեղումների քանակը հասնում է 509 մմ-ի:

Գեոմորֆոլոգիական տեսանկյունից ուսումնասիրվող տարածքը՝ գտնվում է Շիրակի ակումուլյատիվ դաշտավայրի ալյուվիալ-պրոյուվիալ առաջացումների և հրաբխանստվածքային կուտակումների տարածքում: Ռելիեֆը հիմնականում հարթ է, բարդացված առանձին ոչ խորը ձորակներով և ցածր բլրաթմբերով: Բացարձակ նիշերը տատանվում են՝ 1450-1480 մ սահմաններում:

Երկրաբանական կառուցվածքին մասնակցում են միոպլիոցենի հասակի բազալտները և հրաբխային խարամները, չորրորդական ժամանակի հրաբխանստվածքային տուֆերը, որոնց ծածկում են ժամանակակից ալյուվիալ-պրոյուվիալ, լճա-ալյուվիալ առաջացումների խիստ անկայուն շերտերը:

Երկրաբանական երևույթներից հանդիպում են մակերեսային էրոզիա և ջրոդողում մթնոլորտային տեղումներից: Գետահովտային մասերում հնարավոր է հունախորացում, հունափոխում, ինչպես նաև ջրածածկման դեպքեր:

➤ *Առափի գյուղական համայնք*

Ուսումնասիրվող տարածքը գտնվում է Շիրակի մարզում և ընդգրկում է համանուն դաշտավայրի հյուսիս-արևմտյան հատվածը:

Առափի գյուղում կլիման լեռնացամաքային է, որը բնորոշվում է զով, հարաբերական խոնավությամբ ամառներով, խիստ, բարձր խոնավությամբ և 3.0 մ/վրկ արագությամբ քամիներով ուղեկցվող ցուրտ ձմեռներով: Հուլիս ամսվա միջին ամսական ջերմաստիճանը 16°C է, իսկ հունվարի միջին ամսական ջերմաստիճանը -5°C-ից մինչև -12 է: Հարաբերական խոնավությունը 70%: Տարեկան տեղումների քանակը հասնում է 500-600 մմ-ի: Առավելագույն տասնօրյակի ձյան շերտի հաստությունը՝ 50 սմ է:

Առափի գյուղը զբաղեցնում է Ախուրյան գետի հովտի միջին հոսանքի երկու ավերը և նրան կից ոչ բարձրադիր լանջերը: Ախուրյան գետը հանդիսանում է գյուղի հիմնական ջրային արտերիան, որից օգտվում են, մասամբ, ոռոգման նպատակով:

Ներկայացվող տարածքը գտնվում է Շիրակի ակումուլյատիվ դաշտավայրի ալյուվիալ-պրոյուվիալ առաջացումների և հրաբխանստվածքային կուտակումների տարածքում: Ռելիեֆը հիմնականում հարթ է, բարդացված առանձին ոչ խորը ձորակներով և ցածր բլրաթմբերով: Բացարձակ նիշերը տատանվում են 1470-1550 մ սահմանում:

Երկրաբանական կառուցվածքում մասնակցում են ստորին չորրորդականից (QI –QIII) մինչև վերին չորրորդականի ինգիմբրիտային տուֆերը, չորրորդական ժամանակի հրաբխանստվածքային տուֆերը, որոնց ծածկում են ժամանակակից դելյուվիալ-պրոլյուվիալ, լճա-ալյուվիալ առաջացումների խիստ անկայուն հզորության շերտերը:

Երկրաբանական երևույթներից հանդիպում են մակերեսային էրոզիա և ջրոդոդում մթնոլորտային տեղումներից: Գետահովտային մասերում հնարավոր է հունախորացում, հունափոխում, ինչպես նաև ջրածածկման հնարավոր դեպքեր:

➤ *Այգաբաց գյուղական համայնք*

Ուսումնասիրվող տարածքը գտնվում է Շիրակի մարզում և ընդգրկում Գյումրի-Արթիկ երկաթուղու միջնամասի տարածքը:

Այգաբացում կլիման լեռնացամաքային է, որը բնորոշվում է զով, հարաբերական խոնավ ամառներով, խիստ, ցուրտ բարձր խոնավությամբ և 5-7 մ/վրկ արագությամբ քամիներով ուղեկցվող ձմեռներով: Հուլիս ամսվա միջին ամսեկան ջերմաստիճանը 16°C է, իսկ հունվարին՝ -5-ից մինչև -12°C է, օդի հրաբերական խոնավությունը՝ 70%, տարեկան տեղումների քանակը հասնում է 509 մմ-ի:

Տեղանքը գտնվում է Շիրակի ակումուլյատիվ դաշտավայրի ալյուվիալ-պրոլյուվիալ առաջացումների և հրաբխանստվածքային կուտակումների տարածքում (հարավարևելք): Ռելիեֆը հիմնականում հարթ է, բարդացված առանձին ոչ խորը ձորակներով և ցածր բլրաթմբերով: Բացարձակ նիշերը տատանվում են՝ 1540-1600 մ սահմաններում:

Երկրաբանական կառուցվածքին մասնակցում են միոպլիոցենի հասակի բազալտները և հրաբխային խարամները, չորրորդական ժամանակի հրաբխանստվածքային տուֆերը, որոնց ծածկում են ժամանակակից ալյուվիալ-պրոլյուվիալ, լճա-ալյուվիալ առաջացումների խիստ անկայուն շերտերը:

Երկրաբանական երևույթներից հանդիպում են՝ մակերեսային էրոզիա և ջրոդոդում մթնոլորտային տեղումներից:

➤ *Բայանդուր գյուղական համայնք*

Ուսումնասիրվող տարածքը գտնվում է Շիրակի մարզում և ընդգրկում Ախուրյան գետի միջին հոսանքի ձախ ափամերձ տարածքները, որոնք գետի հունից բարձր են մոտ 10-15 մ:

Բայանդուրն ունի լեռնացամաքային կլիմա, որը բնորոշվում է զով, հարաբերական խոնավությամբ ամառներով, ցուրտ, բարձր խոնավությամբ և 5-7 մ/վրկ արագությամբ ուժեղ քամիներով ուղեկցվող ձմեռներով: Հուլիս ամսվա միջին ամսեկան ջերմաստիճանը 16°C է, իսկ հունվարին՝ -5-ից մինչև -12°C է: Հարաբերական խոնավությունը 70%: Տարեկան տեղումների քանակը հասնում է 509 մմ-ի:

Տեղանքը գտնվում է Շիրակի ակումուլյատիվ դաշտավայրի ալյուվիալ-պրոլյուվիալ առաջացումների և հրաբխանստվածքային կուտակումների տարածքում: Ռելիեֆը հիմնականում հարթ է, բարդացված առանձին ոչ խորը ձորակներով և ցածր բլրաթմբերով: Բացարձակ նիշերը տատանվում են՝ 1470-1480 մ սահմաններում:

Երկրաբանական կառուցվածքին մասնակցում են միոպլիոցենի հասակի բազալտները և հրաբխային խարամները, չորրորդական ժամանակի հրաբխանստվածքային տուֆերը, որոնց ծածկում են ժամանակակից ալյուվիալ-պրոլյուվիալ, լճա-ալյուվիալ առաջացումների խիստ անկայուն շերտերը:

Երկրաբանական երևույթներից հանդիպում են՝ մակերեսային էրոզիա և ջրոդոդում մթնոլորտային տեղումներից:

➤ **Գետք գյուղական համայնք**

Ուսումնասիրվող տարածքը գտնվում է Շիրակի մարզում և ընդգրկում Կարկաչան և Ջաջուռ գետակների գետաբերանային հատվածները, որտեղ միանում են Ախուրյան գետին:

Գետքն ունի լեռնացամաքային կլիմա, որը բնորոշվում է զով ու խոնավ, խիստ ցուրտ բարձր խոնավությամբ և ուժեղ քամիներով՝ 5.0-7.0 մ/վրկ արագությամբ, ուղեկցվող ձմեռներով: Հուլիս ամսվա միջին ամսեկան ջերմաստիճանը 16°C է, իսկ հունվարին՝ -5-ից մինչև -12°C է, օդի հարաբերական խոնավությունը՝ 70%, տարեկան տեղումների քանակը հասնում է 509 մմ-ի:

Տարածքը գտնվում է Շիրակի ակումուլյատիվ դաշտավայրի ալյուվիալ-պրոլյուվիալ առաջացումների և հրաբխանստվածքային կուտակումների տարածքում: Ռելիեֆը հիմնականում հարթ է, բարդացված առանձին ոչ խորը ձորակներով և ցածր բլրաթմբերով: Բացարձակ նիշերը տատանվում են՝ 1450-1480 մ սահմաններում:

Երկրաբանական կառուցվածքին մասնակցում են միոպլիոցենի հասակի բազալտները և հրաբխային խարամները, չորրորդական ժամանակի հրաբխանստվածքային տուֆերը, որոնց ծածկում են ժամանակակից ալյուվիալ-դելյուվիալ-պրոլյուվիալ, լճա-ալյուվիալ առաջացումների խիստ անկայուն շերտերը:

Երկրաբանական երևույթներից հանդիպում են՝ մակերեսային էրոզիա և ջրոդոդում մթնոլորտային տեղումներից: Գետահովտային մասերում հնարավոր է հունախորացում, հունափոխում, ինչպես նաև ջրածածկման դեպքեր:

➤ **Ղարիբջանյան գյուղական համայնք**

Ուսումնասիրվող տարածքը գտնվում է Շիրակի մարզում և ընդգրկում Ախուրյանի վտակ՝ Ջաջուռ գետակի գետաբերանային հատվածները:

Ղարիբջանյանն ունի լեռնացամաքային է, որը բնորոշվում է զով ու խոնավ, խիստ ցուրտ բարձր խոնավությամբ և ուժեղ քամիներով՝ 5-7 մ/վրկ արագությամբ, ուղեկցվող ձմեռներով:

Հուլիս ամսվա միջին ամսեկան ջերմաստիճանը 16°C է, իսկ հունվարին՝ -5 °C -ից մինչև -12 °C է, օդի հարաբերական խոնավությունը՝ 70%, տարեկան տեղումների քանակը հասնում է 509 մմ-ի:

Տեղանքը գտնվում է Շիրակի ակումուլյատիվ դաշտավայրի ալյուվիալ-պրոլյուվիալ առաջացումների և հրաբխանստվածքային կուտակումների տարածքում: Ռելիեֆը հիմնականում հարթ է, բարդացված առանձին ոչ խորը ձորակներով և ցածր բլրաթմբերով: Բացարձակ նիշերը տատանվում են՝ 1450-1480 մետրի սահմաններում:

Երկրաբանական կառուցվածքին մասնակցում են միոպլիոցենի հասակի բազալտները և հրաբխային խարամները, չորրորդական ժամանակի հրաբխանստվածքային տուֆերը, որոնց ծածկում են ժամանակակից ալյուվիալ-դելյուվիալ-պրոլյուվիալ, լճա-ալյուվիալ առաջացումների խիստ անկայուն շերտերը:

Երկրաբանական երևույթներից հանդիպում են մակերեսային էրոզիա և ջրոդոդում մթնոլորտային տեղումներից: Գետահովտային մասերում հնարավոր է հունախորացում, հունափոխում, ինչպես նաև ջրածածկման դեպքեր:

➤ **Հացիկ գյուղական համայնք**

Ուսումնասիրվող տարածքը գտնվում է Շիրակի մարզում և ընդգրկում Շիրակի ջրանցքի միջին հոսանքի ափամերձ տարածքները:

Հացիկ համայնքն ունի լեռնացամաքային կլիմա, որը բնորոշվում է զով ու խոնավ, խիստ ցուրտ բարձր խոնավությամբ և ուժեղ քամիներով՝ 5-7 մ/վրկ արագությամբ, ուղեկցվող ձմեռներով:

Հուլիս ամսվա միջին ամսեկան ջերմաստիճանը 16°C է, իսկ հունվարին՝ -5°C -ից մինչև -12°C է: Հարաբերական խոնավությունը 70%: Տարեկան տեղումների քանակը հասնում է 509 մմ-ի:

Տեղանքը գտնվում է Շիրակի ակումուլյատիվ դաշտավայրի այլուվիալ-պրոյուվիալ առաջացումների և հրաբխանստվածքային կուտակումների տարածքում: Ռելիեֆը հիմնականում հարթ է, բարդացված առանձին ոչ խորը ձորակներով և ցածր բլրաթմբերով: Բացարձակ նիշերը տատանվում են՝ 1610-1680 մետրի սահմաններում:

Երկրաբանական կառուցվածքին մասնակցում են միոպլիոցենի հասակի բազալտները և հրաբխային խարամները, չորրորդական ժամանակի հրաբխանստվածքային տուֆերը, որոնց ծածկում են ժամանակակից այլուվիալ-դելյուվիալ-պրոյուվիալ, լճա-այլուվիալ առաջացումների խիստ անկայուն հզորության շերտերը:

Երկրաբանական երևույթներից հանդիպում են մակերեսային էրոզիա և ջրոդոդում մթնոլորտային տեղումներից:

➤ **Հայկական գյուղական համայնք**

Ուսումնասիրվող տարածքը գտնվում է Շիրակի մարզում և ընդգրկում Հայկական գետի ստորին հոսանքի ափամերձ տարածքները, որոնք գետի հունից բարձր են 2-3 մ:

Հայկականում կլիման լեռնացամաքային է, որը բնորոշվում է զով ու խոնավ, խիստ ցուրտ բարձր խոնավությամբ և ուժեղ քամիներով՝ 5-7 մ/վրկ արագությամբ, ուղեկցվող ձմեռներով:

Հուլիս ամսվա միջին ամսական ջերմաստիճանը 16°C է, իսկ հունվարին՝ -5°C -ից մինչև -12°C է, օդի հարաբերական խոնավությունը՝ 70%: Տարեկան տեղումների քանակը հասնում է 509 մմ-ի:

Տեղանքը գտնվում է Շիրակի ակումուլյատիվ դաշտավայրի այլուվիալ-պրոյուվիալ առաջացումների և հրաբխանստվածքային կուտակումների տարածքում: Ռելիեֆը հիմնականում հարթ է, բարդացված առանձին ոչ խորը ձորակներով և ցածր բլրաթմբերով: Բացարձակ նիշերը տատանվում են՝ 1450-1490 մ սահմաններում:

Երկրաբանական կառուցվածքին մասնակցում են միոպլիոցենի հասակի բազալտները և հրաբխային խարամները, չորրորդական ժամանակի հրաբխանստվածքային տուֆերը, որոնց ծածկում են ժամանակակից այլուվիալ-դելյուվիալ-պրոյուվիալ, լճա-այլուվիալ առաջացումների խիստ անկայուն շերտերը:

Երկրաբանական երևույթներից հանդիպում են՝ մակերեսային էրոզիա և ջրոդոդում մթնոլորտային տեղումներից: Գետահովտային մասերում հնարավոր է հունախորացում, հունափոխում, ինչպես նաև ջրածածկման դեպքեր:

➤ **Կապս գյուղական համայնք**

Ուսումնասիրվող տարածքը գտնվում է Շիրակի մարզում և ընդգրկում Ախուրյան գետի միջին հոսանքի ափամերձ բարձրադիր տարածքները:

Կապս համայնքն ունի լեռնացամաքային կլիմա, որը որը բնորոշվում է զով ու խոնավ, խիստ ցուրտ բարձր խոնավությամբ և ուժեղ քամիներով՝ 5.0-7.0 մ/վրկ արագությամբ, ուղեկցվող ձմեռներով:

Հուլիս ամսվա միջին ամսական ջերմաստիճանը 16°C է, իսկ հունվարին՝ -5°C -ից մինչև -12°C է, օդի հարաբերական խոնավությունը 70%, տարեկան տեղումների քանակը հասնում է 509 մմ-ի:

Ուսումնասիրվող տարածքը գտնվում է Շիրակի ակումուլյատիվ դաշտավայրի այլուվիալ-պրոյուվիալ առաջացումների և հրաբխանստվածքային կուտակումների եզրային տարածքում: Ռելիեֆը հիմնականում անհարթ է, բարդացված առանձին ոչ խորը ձորակներով և ցածր բլրաթմբերով: Բացարձակ նիշերը տատանվում են 1660-1750 մետրի սահմաններում:

Երկրաբանական կառուցվածքին մասնակցում են միոպլիոցենի հասակի բազալտները և հրաբխային խարամները, չորրորդական ժամանակի հրաբխանստվածքային տուֆերը, որոնց

ծածկում են ժամանակակից այլովիալ-դելյուվիալ-պրոյուվիալ, լճա-այլովիալ առաջացումների խիստ անկայուն հզորության շերտերը:

Երկրաբանական երևույթներից հանդիպում են մակերեսային էրոզիա և ջրոդողում մթնոլորտային տեղումներից:

➤ *Վահրամաբերդ գյուղական համայնք*

Ուսումնասիրվող տարածքը գտնվում է Շիրակի մարզում և ընդգրկում է Ախուրյան գետի միջին հոսանքի ձախափնյա տարածքները: Վահրամաբերդ գյուղի ներկա տարածքը գտնվում է Ախուրյան գետի ձախ ափի բարձրադիր տարածքում:

Վահրամաբերդում կլիման լեռնացամաքային է, որը բնորոշվում է զով ու խոնավ, խիստ ցուրտ բարձր խոնավությամբ և ուժեղ քամիներով՝ 5-7 մ/վրկ արագությամբ, ուղեկցվող ձմեռներով:

Հուլիս ամսվա միջին ամսեկան ջերմաստիճանը 16°C է, իսկ հունվարին՝ -5°C-ից մինչև -12°C է, օդի հարաբերական խոնավությունը՝ 70%: Տարեկան տեղումների քանակը հասնում է 509 մմ-ի:

Տարածքը գտնվում է Շիրակի ակումուլյատիվ դաշտավայրի հրաբխանստվածքային կուտակումների տարածքում: Ռելիեֆը հիմնականում հարթ է, բարդացված առանձին ոչ խորը ձորակներով և ցածր բլրաթմբերով: Բացարձակ նիշերը տատանվում են՝ 1650-1680 մ սահմաններում: Տարածքը հանդիսանում է Ախուրյան գետի հունից բարձր դենուդացիոն դելյուվիալ-պրոյուվիալ կուտակումների տարածք:

Երկրաբանական կառուցվածքին մասնակցում են միոպլիոցենի հասակի բազալտները և հրաբխային խարամները, չորրորդական ժամանակի հրաբխանստվածքային տուֆերը, որոնց ծածկում են ժամանակակից էյուվիալ-դելյուվիալ-պրոյուվիալ առաջացումների խիստ անկայուն շերտերը:

Երկրաբանական երևույթներից հանդիպում են մակերեսային էրոզիա և ջրոդողում մթնոլորտային տեղումներից:

➤ *Ոսկեհասկ գյուղական համայնք*

Ուսումնասիրվող տարածքը գտնվում է Շիրակի մարզում և ընդգրկում է համանուն դաշտավայրի հյուսիսարևմտյան հատվածի տարածքը, հիմնականում ընդգրկելով ջրամատակարարման գյուղամիջյան և մերձակա տարածքը, որը բերված է կից քարտեզում:

Ոսկեհասկ գյուղում կլիման լեռնացամաքային է, որը բնորոշվում է զով ու խոնավ, խիստ ցուրտ բարձր խոնավությամբ և ուժեղ քամիներով՝ 5-7 մ/վ արագությամբ, ուղեկցվող ձմեռներով:

Հուլիս ամսվա միջին ամսեկան ջերմաստիճանը 16°C է, իսկ հունվարին՝ -5°C-ից մինչև -12°C է, օդի հարաբերական խոնավությունը՝ 70%, տարեկան տեղումների քանակը հասնում է 509 մմ-ի:

Տարածքը գտնվում է Շիրակի ակումուլյատիվ դաշտավայրի այլովիալ-պրոյուվիալ առաջացումների և հրաբխանստվածքային կուտակումների տարածքում, ռելիեֆը հիմնականում հարթ է, բարդացված առանձին ոչ խորը ձորակներով և ցածր բլրաթմբերով: Բացարձակ նիշերը տատանվում են 1500-1550 մ սահմաններում:

Երկրաբանական կառուցվածքին մասնակցում են ստորին չորրորդականից (QI -QIII) մինչև վերին չորրորդականի ինգիմբրիտային տուֆերը, չորրորդական ժամանակի հրաբխանստվածքային տուֆերը, որոնց ծածկում են ժամանակակից դելյուվիալ-պրոյուվիալ, լճա-այլովիալ առաջացումների խիստ անկայուն հզորության շերտերը:

Երկրաբանական երևույթներից հանդիպում են մակերեսային էրոզիա և ջրոդողում մթնոլորտային տեղումներից, հունախորացում, հունափոխում, ինչպես նաև ջրածածկման հնարավոր դեպքեր:

➤ **Երազգավոր գյուղական համայնք**

Ուսումնասիրվող տարածքն ընդգրկում է Ախուրյան գետի միջին հոսանքի ափամերձ տարածքները: Գյուղի ներկա տարածքը գտնվում է Ախուրյան գետի ձախ ափի բարձրադիր (8-10 մետր հունից բարձր) տարածքում, իսկ նախկին տարածքը գտնվում էր աջ ափին, մինչև Ախուրյանի ջրամբարի կառուցումը: Այն անցել է մասամբ ջրի տակ և հանդիսանում է ջրամբարի տարածք: Գյուղը կառուցապատվել է 1980-ական թվականների սկզբներում:

Կլիման լեռնացամաքային է, որը բնորոշվում է զով ու խոնավ, խիստ ցուրտ բարձր խոնավությամբ և ուժեղ քամիներով՝ 5-7 մ/վ արագությամբ, ուղեկցվող ձմեռներով:

Հուլիս ամսվա միջին ամսական ջերմաստիճանը 16°C է, իսկ հունվարին՝ -5°C-ից մինչև -12°C է, օդի հարաբերական խոնավությունը՝ 70%, տարեկան տեղումների քանակը հասնում է 509 մմ-ի:

Տարածքը գտնվում է Շիրակի ակումուլյատիվ դաշտավայրի ալյուվիալ-պրոլյուվիալ առաջացումների և հրաբխանստվածքային կուտակումների տարածքում: Ռելիեֆը հիմնականում հարթ է, բարդացված առանձին ոչ խորը ձորակներով և ցածր բլրաթմբերով: Բացարձակ նիշերը տատանվում են՝ 1465-1480 մ սահմաններում և անկումը դեպի արևմուտք՝ Ախուրյան գետի հունը:

Երկրաբանական կառուցվածին մասնակցում են միոպլիոցենի հասակի բազալտները և հրաբխային խարամները, չորրորդական ժամանակի հրաբխանստվածքային տուֆերը, որոնց ծածկում են ժամանակակից ալյուվիալ-պրոլյուվիալ, լճա-ալյուվիալ առաջացումների խիստ անկայուն շերտերը:

Երկրաբանական երևույթներից հանդիպում են մակերեսային էրոզիա և ջրոդողում մթնոլորտային տեղումներից:

2.2. Կենսաբազմազանություն և հատուկ պահպանվող տարածքներ

2.2.1. Բուսական աշխարհ

Ծրագրի տարածքները գտնվում են ՀՀ Շիրակի ֆլորիստիկական շրջանում: Շիրակի մարզում բուսական աշխարհը խիստ բազմազան է, որին նպաստել են բարձրությունների մեծ տարբերությունները, լեռնալանջերի տարբեր կողմնադրությունները և մակերևույթի թեքությունները:

Շիրակի մարզում կան շուրջ 40 հազվագյուտ և անհետացող բուսատեսակներ, որոնք գրանցված են Հայաստանի Կարմիր գրքում: Տարածքի բուսականությունը պատկանում է հիմնականում տափաստանայինի տիպին, գետահովիտներում աճում են ակացիա, թխկենի, հացենի և այլ ծառատեսակներ: Գերակշռում են լեռնատափաստանային սևահողերը՝ տարախոտա-հացազգի խոտաբույսերի տարածմամբ: Հացահատիկային զանազան խոտաբույսերի ֆորմացիաներ են առկա:

Լեռնային տափաստանները ներկայացված են երեք՝ փետրախոտային (*Stipa*), շյուղախոտային (*Festuca*) և ցորնուկային (*Bromus*) տափաստանների ֆորմացիաներով:

Ներկայումս Շիրակի ֆլորիստիկ գոտում անտառային բուսականությունն իսպառ բացակայում է: Ոչ անտառածածկ հողերը նախկինում ծածկված են եղել անտառներով, որի վկայությունն է թփային մացառների առկայությունը:

Ենթածրագրի տարածքում առկա բուսածածկում հանդիպում են՝ բարդի (*Populus*), ակացիա (*Robinia*), թխկի (*Acer*), թթենի (*Morus*), վայրի ծիրանենի (*Armeniaca*), սզնի (*Crataegus*), ուռատերև տանձենի (*Pyrus salicifolia*), սովորական և սրապտուղ հացենի (*Fraxinus excelsior*, *F. oxycarpa*), աղեղնաեզր ասպիրակ (*Spiraea crenata*), արևելյան ծորենի (*Berberis orientalis*), սովորական չմենի (*Cotoneaster integerrima*), վրացական ցախակեռաս (*Lonicera iberica*), սովորական լեռնաչամիչ (*Ephedra procera*), թփային հասմիկ (*Jasminum fruticans*), թելի (*Ulmus*), ալուչա (*Prunus*), փշատենի (*Elaeagnus*), ուռենի (*Salix*), մասրենի (*Rosa*):

2.2.2. Կենդանական աշխարհ

Շիրակի մարզը բնակատեղի է նաև կենդանիների և թռչունների որոշ հազվագյուտ տեսակների համար: Հազվագյուտ բուսատեսակների, կենդանատեսակների և թռչնատեսակների պահպանության գործում իր մեծ նշանակությունն է ունեցել «Արփի լիճ» ազգային պարկի ստեղծումը: Վերջինս սակայն չի առնչվում ծրագրի շրջանակներում ընդգրկված տարածքների հետ:

Նկարագրվող տարածքում կենդանական աշխարհը ներկայացված է տափաստանային, բարձր լեռնային լայն տարածված կենդանական ձևերով: Այն ներկայացված է ընտանի կենդանիների, թռչունների վերարտադրությամբ: Երկկենցաղներից և սողուններից այստեղ հանդիպում են դողդիների, գորտերի, մողեսների և օձերի բազմաթիվ տեսակներ: Լայնորեն տարածված կենդանատեսակներից այստեղ հանդիպում են. կաթնասուններից՝ նապաստակ (*Lepus europaeus*), աղվես (*Vulpes vulpes*), գայլ (*Canis lupus*) և մի շարք կրծողներ:

Ծրագրի իրականացման տարածքում չկան բնապահպանական տեսանկյունից խոցելի կամ բնության հատուկ պահպանվող տարածքներ:

Ծրագրով նախատեսված աշխատանքները ներառում են արդեն գոյություն ունեցող կառուցվածքների վերականգնման աշխատանքներ, հետևաբար դրանց ազդեցությունը բնական լանդշաֆտների վրա կլինի նվազագույն՝ կրելով ժամանակավոր բնույթ:

2.2.3. Պատմամշակութային հուշարձաններ

Ծրագրի գյուղական բնակավայրերը և հատկապես Գյումրի քաղաքը հարուստ է պատմամշակութային և հնագիտական հուշարձաններով: Գյումրի քաղաքի ճարտարապետական կերպարը բնորոշող եկեղեցիներն են Ամենափրկիչը, Ս.Աստվածածինը, Ս.Նշանը, ռուսական մատուռը, զորակայանների տարածքում գտնվող ուղղափառ երկու եկեղեցիները: Քաղաքի կենտրոնական մասն իր պատմաճարտարապետական և հնագիտական հուշարձաններով, ինչպես նաև Ախուրյանի ձորը՝ որպես բնական լանդշաֆտի պահպանման տարածք, ընդգրկված են «Կումայրի» պետական պատմաճարտարապետական արգելոց թանգարանի սահմաններում:

Ծրագրում ընդգրկված գյուղական համայնքներում ևս կան պատմամշակութային շինություններ: Գետքում են գտնվում “Ամենափրկիչ” և սբ. Հովհաննես մատուռները, Ախուրիկում՝ սբ. Եղյա մատուռը: Բայանդուր գյուղից հյուսիս-արևմուտք տեղակայված են հայկական և հունական եկեղեցիներ, իսկ Առափի գյուղից դեպի հյուսիս՝ սուրբ Կույս Մարիամ անունով սրբավայրը:

Այգաբաց գյուղի հյուսիս-արևմտյան եզրին է գտնվում “Այգավան” բնակատեղին (մ.թ.ա. 3-րդ հզմ.): Ա. հայտնաբերվել են (մ.թ.ա. 10-րդ-8-րդ դդ.) զանազան հնություններ: Այստեղ կա 18-19դդ. եկեղեցի:

Հացիկ գյուղից մոտ 1 կմ հյուսիս-արևելք գտնվում է “Յոթ աղբյուր” մատուռը, իսկ գյուղում է տեղակայված 1890թ. կառուցված “Բլուկ” եկեղեցին:

Վահրամաբերդ գյուղից հարավ-արևմուտք ձորամիջում գտնվում են Մարմաշենի վանքը (9-13դդ.) և 13դ. Կամուրջը, իսկ Կապսում՝ “Ժամ” եկեղեցին, “Սրբի սար” և “Սրբատեղ” մատուռները:

Չնայած ծրագրի բնակավայրերում կան պատմամշակութային և հնագիտական հուշարձաններ, սակայն ծրագրի իրականացումը չի կարող ունենալ որևէ բացասական ազդեցություն նրանց վրա, քանի որ նրանք բոլոր գտնվում են շին. հրապարակներից բավականին հեռու:

3. ՆԱԽԱՏԵՄՎՈՂ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐԸ¹

3.1. Ջրամատակարարման և ջրահեռացման գոյություն ունեցող համակարգերի նկարագրություն

3.1.1. Գյումրի քաղաքի ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերի ընդհանուր նկարագրություն

Գյումրի քաղաքի և հարակից գյուղերի մեծամասնության ջրամատակարարումն իրականացվում է հիմնականում 3 կապտաժներից (աղբյուր) և Գյումրու հյուսիսում գտնվող արտեզյան ջրհորներից (Ղազանչի 1, 2, Կրասար և Զույգաղբյուր):

Կապտաժների ընդհանուր համակցված հզորությունը կազմում է մոտ 1700 լ/վ: Ստորև ներկայացված է յուրաքանչյուր առանձին աղբյուրի հզորությունը.

- Ղազանչի 1 - 460 լ/վ
- Ղազանչի 2 - 420 լ/վ
- Զույգաղբյուր - 530 լ/վ
- Կրասար - 285 լ/վ

Այս աղբյուրների ջուրը 4 ջրատարներով (երեքը սնում են Գյումրիի ջրամատակարարման համակարգը և որոշ գյուղեր, իսկ չորրորդը սնում է միայն գյուղերի ջրամատակարարման համակարգը) հոսում է հարավային ուղղությամբ, Ախուրյանի գետահովիտով ներքև դեպի Գյումրի: Նշված աղբյուրների ջուրը բարձր որակի է, այնուամենայնիվ վերջինիս քլորացումն իրականացվում է Գյումրիից դեպի հյուսիս-արևմուտք գտնվող Կապսի քլորակայանում (Փուլ 1): Ներկայումս քաղաք մուտք գործող ջրատարների ջրերի վարակագրերումը կատարվում է յուրաքանչյուր ջրատարի համար առանձին-առանձին կառուցված քլորակայանների միջոցով:

Թեև մոտ 1700 լ/վ ջրաքանակն ավելի քան բավարար է Գյումրու և հարակից գյուղերի ջրապահանջն ապահովելու համար, սակայն առկա ջրակորուստների պատճառով այդ ջրաքանակը ներկայումս չի բավարարում: Ճնշումային ոչ բոլոր գոտիների տարածքներում է ապահովված շուրջօրյա ջրամատակարարում, քանի որ գոյություն ունեցող բաշխիչ ցանցից ջրի արտահոսքի կորուստները շատ մեծ են:

Գյումրի քաղաքն ու հարակից գյուղերը մատակարարող գլխավոր ջրատարների քանակն ու տրամագծերը ընդհանուր առմամբ շատ մեծ են: Ջրամատակարարումն հիմնականում իրականացվում է ինքնահոս, սակայն ջրատարները լցվում են կիսով չափ: Ծրագրի Փուլ 1-ի ընթացքում գլխավոր ջրատարները որոշ չափով վերականգնվել են:

Գյումրի քաղաքի ջրահեռացման համակարգի անմխիթար վիճակի պատճառով և նրանցում հաճախակի են խցանումներ տեղի ունենում, ինչի արդյունքիում չմաքրված կեղտաջրերը լցվում են քաղաքի տարածքով հոսող գետակներ:

Հիմնվելով տեխնիկատնտեսական ուսումնասիրությունների ընթացքում կատարված հետազոտությունների վրա՝ Գյումրիում կոյուղու համակարգը նախատեսված է որպես առանձին համակարգ միայն կեղտաջրերի համար: Առկա է մակերևութային ջրերի առանձին ջրահեռացման համակարգ, ինչպես նաև քարե ջրթող խողովակների հին համակարգ, որոնք կոչվում են «Քյարիզներ»: Այն կառուցվել է որպես հին ջրամատակարարման համակարգի մի մաս՝ գրունտային ջրերի հավաքման համար: Կոյուղու այդ համակարգի գծագրերը գոյություն չունեն

Կոյուղու համակարգի հիմնական կառուցվածքը հետևյալն է.

- Գյումրի Չայ գետը, որն ամբողջապես ծածկված է Ռուսթավելի և Տերյան փողոցների արանքում, հավաքում է գետի և երկաթգծի միջև ընկած քաղաքի կենտրոնական մասի կոյուղին,
- Արևմտյան Գյումրի Չայ կոլեկտորը գալիս է Անիից՝ գետին գուգահեռ և հավաքում է գետից արևմուտք ընկած տարածքների կոյուղին,

¹ բաժինը մշակվել է հիմնվելով նախագծային փաստաթղթերի հիմնական հաշվետվություն վրա (Գիրք 1Ա. Հիմնական հաշվետվություն)

- Շերամ և Մուշ թաղամասերի կոյուղին հավաքվում է արևմտյան կոլեկտորի միջոցով, որը ԿՄԿ-ից 1 կմ հոսանքն ի վեր միանում է արևմտյան Գյումրի Չային,
- Արևելյան կոլեկտորը, որը հավաքում է երկաթգծից արևելք ընկած տարածքների կոյուղին, ամբողջովին չի կառուցվել և կոյուղին թափվում է Ղորղոբա գետը:

Սակայն տարիների ընթացքում թերի տեխսպասարկման հետևանքով կոյուղու խողովակները խցանվել կամ վնասվել են: Կատարվել են բազմաթիվ նորոգումներ հաշվի չառնելով նույն տրամագծի խողովակով շարունակելու հանգամանքը, ինչը հանգեցրել է հետագա խցանումների: Գոյություն ունեն նաև բազմաթիվ փոխկապակցումներ մակերևութային ջրերի և կոյուղու համակարգերի միջև, որոնք իրականացվել են խցանումների պատճառով առաջացած հեղեղումները նվազեցնելու նպատակով, և ոչ ճիշտ միացումներ մակերևութային ջրահեռացման համակարգին:

Թեև տեղանքի ռելիեֆային պայմանները թույլ են տալիս իրականացնել կեղտաջրերի ինքնահոս հեռացում, Գյումրու կոյուղու համակարգը լավ կազմակերպված չէ և ընդհանուր առմամբ այն չի սպասարկվում՝ բացառությամբ խցանումների առաջացման դեպքում հրատապ նորոգումներից: Ցանցի վերաբերյալ տվյալները քիչ են, իսկ համակարգը անմխիթար վիճակում է:

1988թ. երկրաշարժից հետո, երբ քաղաքի հյուսիսային մասում սկսվեց Նոր Մարմաշեն բնակելի թաղամասի կառուցապատման աշխատանքները, գուգահեռաբար իրագործվեց նաև թաղամասի կոյուղացումը և կեղտաջրերի հեռացումը դեպի կոյուղու մաքրման կայան՝ երեք գլխավոր կոյուղագծերով՝ 1000-1200 և 600 մմ տրամագծերով:

Գյումրու հարավում գտնվող 60.0 հազ. մ³/օր հզորությամբ կեղտաջրերի կենսաբանական մաքրման կայանը 1997թ.-ից ի վեր չի գործում: Նախկինում կայանն ապահովում էր առաջացած կեղտաջրերի քանակի մոտ 50%-ի մաքրումը՝ ըստ իր հզորության:

Սույն ծրագրի շրջանակներում կոյուղու համար հատկացված միջոցները նախատեսված է օգտագործել միայն նախկին «Շիրակ ջրմուղկոյուղի» ՓԲԸ-ի կողմից որոշակիացված կոյուղու ամենախնդրահարույց հատվածների փոխարինման համար: Առանց կոյուղու ցանցի համալիր ուսումնասիրության, որը պետք է ներառի դիտահորերի ամբողջական զննում և ուսումնասիրություններ գլխավոր գծերի երկայնքով, հնարավոր չէ պատկերացում կազմել գոյություն ունեցող կոյուղու համակարգի ամբողջական վիճակի և փոխկապակցվածության վերաբերյալ:

Ծրագրում ընդգրկված բնակավայրերի ջրամատակարարման համակարգերի սխեմատիկ պատկերը բերված է [Հավելված 2](#)-ում, իսկ Գյումրի քաղաքում կոյուղագծերի փոխարինման տարածքների տեղադրության մանրամասները՝ [Հավելված 3](#)-ում:

3.1.2. Գյուղական բնակավայրեր ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերի ընդհանուր նկարագրություն

Ծրագրի շրջանակներում ընդգրկված գյուղերը տեղակայված են Գյումրի քաղաքից դեպի արևմուտք և հարավ-արևմուտք: Դրանց ջրամատակարարումն իրականացվում է Ղազանչի-2 ջրատարից՝ Ախուրյանի տարածաշրջանային գլխավոր կոլեկտորի միջոցով, Կապսի ջրամաբարում քլորացում իրականացնելուց հետո:

Ղազանչի ջրատարի ճյուղավորումները կարևոր նշանակություն ունեն, քանի որ նրանք ջուր են մատակարարում Ախուրյանի հովտում գտնվող գյուղերին: Հյուսիսային DN250 ջրատարը մատակարարում է Վահրամաբերդ, Ողջի, Ոսկեհասկ և գոյություն ունեցող Ոսկեհասկ ՕԿՋ-ից հարավ գտնվող այլ գյուղերին: Մյուս ջրատարը մատակարարում է Առափի գյուղին: Ընդհանուր առմամբ այս ջրատարները գտնվում են նորմալ վիճակում:

Ստորև ներկայացված են ջրամատակարարման և ջրահեռացման ընդհանուր բնութագրերն ըստ առանձին գյուղերի:

➤ **գ. Ախուրիկ**

Ջրամատակարարումն իրականացվում է 100մմ տրամագիծ ունեցող թուջե ջրագծով Ոսկեհասկ գյուղի մոտ գտնվող ջրամբարից, որը ջուր է ստանում Ախուրյանի տարածաշրջանային գլխավոր կոլլեկտորից:

Բաշխիչ ցանցն ունի 8կմ երկարություն և բաղկացած է պողպատե խողովակաշարերից: Կառուցված լինելով 1967թ-ին, այն ներկայումս ծայրահեղ վատ վիճակում է: Տնային տնտեսությունների շուրջ 60%-ն ունեն տնային միացումներ, բացակայում են ջրաչափերը: Պողպատե խողովակների վատ վիճակի պատճառով մեծ են ջրակորուստները:

Ծրագրի Փուլ III-ի շրջանակներում նախատեսվում է վերականգնել Ոսկեհասկ գյուղից դեպի արևելք ընկած գոյություն ունեցող ՕԿՁ-ն, որը ծառայում է հոսանքն ի վար տեղակայված մի քանի գյուղերի համար: Կվերականգնվի նաև գյուղի խմելու ջրամատակարարման բաշխիչ ցանցը:

➤ **գ. Առափի**

Գյուղի ջրամատակարարման ցանցը բաժանվում է երկու միմյանցից անկախ մասերի: Նոր մասը կառուցվել է Ախուրյան գետի արևելյան կողմում և մատակարարվում է Վարդ Բաղի ջրաղբյուրներից 750մ երկարություն և 125մմ տրամագիծ ունեցող պողպատե ջրագծով: Հին Առափին գտնվում է Ախուրյան գետի արևմտյան մասում և մատակարարվում է Ղազանչի 2 ջրատարից՝ 50 մմ տրամագիծ և 100 մ երկարություն ունեցող երկու միացումներով:

Հին Առափիի բաշխիչ ցանցը կառուցվել է ավելի քան 40 տարի առաջ: Բաշխիչ ցանցի ընդհանուր երկարությունը 20կմ է, որն իրականացված է թուջե և պողպատե խողովակներով: Ներկայումս այն շատ վատ վիճակում է և հաճախակի են վթարները: Բնակիչների 90%-ն ունի տնային միացումներ:

Ծրագրի ներկայիս Փուլ III-ի շրջանակներում գյուղի արևմտյան մասում՝ սարալանջին, կկառուցվի նոր ջրամբար: Ջրամբարը բաղկացած կլինի 2x250մ³ տարողություններից, որոնք կապահովեն 500 մ³ գումարային ծավալ: Ամբողջ գյուղում կիրականացվի նաև ջրամատակարարման նոր բաշխիչ ցանց:

➤ **գ. Այգաբաց**

Այգաբաց գյուղում խմելու ջրամատակարարումը համարվում է համայնքի կարևորագույն խնդիրներից ամենաառաջնահերթը: Թեև 2009թ. համայնքում կատարվել է ջրամատակարարման համակարգի մասնակի կառուցման աշխատանքներ, սակայն ընդհանուր առմամբ համայնքի բաշխիչ ցանցն ունի 30-40 տարվա վաղեմություն: Բաշխիչ ցանցի ընդհանուր երկարությունը շուրջ 4 կմ է, կառուցվել է 1982թ-ին և նրա հիմնական մասը կարիք ունի կապիտալ վերանորոգման և կառուցման:

Գյուղի արևմտյան կողմում ընկած մի փոքր հատված ունի 150մմ տրամագծով կոյուղու կոլեկտոր, որին միացված է դպրոցի կոյուղին: Կոյուղու կոլեկտորները դատարկվում են սեպտիկ հորերի մեջ (կոյուղու հոր): Տնային տնտեսությունների շուրջ 50%-ն ունեն սեպտիկ հորեր:

➤ **գ. Բայանդուր**

Ջրամատակարարումն իրականացվում է Ախուրյանի տարածաշրջանային գլխավոր կոլլեկտորից՝ 1կմ երկարություն ունեցող 100մմ տրամագծով պողպատե ճյուղավորումով, որը կառուցվել է ավելի քան 30 տարի առաջ: Գյուղը չունի ՕԿՁ:

Բաշխիչ ցանցն ունի մոտ 10 կմ երկարություն: Տների մոտ 70%-ը միացված է ցանցին, իսկ բնակիչների շուրջ 30%-ն օգտվում է փողոցներում և բակերում գտնվող ծորակներից:

Ծրագրի Փուլ III-ի շրջանակներում նախատեսվում է վերականգնել Ոսկեհասկ գյուղից դեպի արևելք ընկած գոյություն ունեցող ՕԿՁ-ն, որը ծառայում է հոսանքն ի վար տեղակայված մի քանի գյուղերի համար: Կվերականգնվի նաև գյուղի խմելու ջրամատակարարման բաշխիչ ցանցը:

➤ **գ. Գետք**

Գետք գյուղի ջրամատակարարման համակարգը սնվում է Ախուրյանի տարածաշրջանային

գլխավոր կողմերից 100մ տրամագիծ և 2,5 կմ երկարություն ունեցող պողպատե ջրագծով: Բաշխիչ ցանցը կառուցվել է 1965թ-ին և մինչ օրս չի վերանորոգվել, որի պատճառով հաճախակի են վթարները: Քայքայված խողովակների պատճառով ջրակորուստները շատ մեծ են: Բաշիչ ցանցում ճնշումն անբավարար է, որի հետևանքով գյուղի ծայրամասերին գրեթե ջուր չի հասնում:

Գյուղի նոր թաղամասն ունի շուրջօրյա ջրամատակարարում: Այն կառուցվել է 1988 թ-ին երկրաշարժից հետո և թաղամասի ջրամատակարարումն իրականացվում տեղական աղբյուրներից՝ սեփական ջրամատակարարման ցանցով:

Ծրագրի Փուլ III-ի շրջանակներում նախատեսվում է վերականգնել Ոսկեհասկ գյուղից դեպի արևելք ընկած գոյություն ունեցող ՕԿՁ-ն, որը ծառայում է հոսանքն ի վար տեղակայված մի քանի գյուղերի համար: Կվերականգնվի նաև գյուղի խմելու ջրամատակարարման բաշխիչ ցանցը:

➤ **գ. Ղարիբջանյան**

Գյուղն ունի մեկ միացում Ախուրյանի տարածաշրջանային գլխավոր կողմերից: Բոլոր տները միացված են ջրագծին: Բաշխիչ ցանցը կառուցվել է 1953 թ-ին, ջրամատակարարումը շուրջօրյա է, սակայն բաշխիչ ցանցը շատ վատ վիճակում է: Այն մասամբ է վերանորոգվել, մեծ են ջրակորուստները, ինչի հետևանքով բնակիչները ջուր չեն ունենում: Թեև գյուղն ունի նաև ոռոգման համակարգ, սակայն խմելու ջրամատակարարման նպատակով տրված ջուրն անօրինական օգտագործվում է նաև ոռոգման համար:

➤ **գ. Հացիկ**

Այն գտնվում է Գյումրի քաղաքից դեպի հյուսիս: Գյուղի հյուսիսային կողմով՝ արևմուտքից դեպի արևելք, անցնում են երկու ջրատարներ՝ Ախուրյանի հին խողովակաշարը, որն այժմ ավարտվում է Շիրակ գյուղում, և Ախուրյանի խողովակաշարը, որը գնում է դեպի Կառնուտի ջրամբար և շարունակվում մինչև նոր Ախուրյան գյուղը: Ներկայումս գյուղի ջրամատակարարումն իրականացվում է երկու ջրատարներով: Գյուղի առկա բաշխիչ ցանցի երկարությունը կազմում է 10.8կմ, որի մեծ մասը կառուցվել է 1960-ականներին և գտնվում է խիստ անմխիթար վիճակում: Բաշխիչ ցանցում մեծ են հոսակորուստները:

Նախկինում վերակառուցվել են մոտ 1.2 կմ բաշխիչ խողովակաշարեր, իսկ մնացածը փոխարինման կարիք ունեն: Ջրաչափության ենթակա է սպառողների 98%-ը:

➤ **գ. Հայկավան**

Համայնքն հիմնականում ապահովված է շուրջօրյա խմելու ջրով: Այն մասն է կազմում կենտրոնացված ջրամատակարարման, սնվում է Ղազանչի- Գյումրի ջրագծից: Գյուղում գործում է ՝ 250մ³ տարողությամբ ՕՁԿ, որը շահագործման է հանձնվել 2013 թ.:

Ջրամատակարարման համակարգում ճնշումը անբավարար է: Առկա են նաև ջրհորներ, որոնք օգտագործվում են ոռոգման և կենցաղային նպատակների համար:

Համայնքի բաշխիչ ցանցն ունի մոտ 18 կմ երկարություն, այն հիմնականում կառուցվել է 1960-ական թվականներին: Խմելու ջրամատակարարման ցանցի վերանորոգումը համարվում է համայնքի առաջնահերթ խնդիրներից մեկը: Ջրագծերի մեծ մասն ունեն վերանորոգման խիստ կարիք: 2010 թ. “Հայկական Կարիտաս” բարեգործական կազմակերպության և համայնքի միջոցներով վերանորոգվել է միայն մոտ 1 կմ ջրագծերի հատված:

Գյուղը կոյուղացված է մասնակի: Արևելյան հատվածը կառուցվել է 1988 թ. և ունի կոյուղու համակարգ, որը լցվում գետ: Գյուղի ավելի հին հատվածում տեղակայված մանկապարտեզն ու դպրոցը ունեն կոյուղու կոլեկտորներ: Դպրոցի կոլեկտորը դատարկվում է սեպտիկ հորի, իսկ մանկապարտեզի կոլեկտորը գետի մեջ:

Մասնավոր տները ունեն բակային զուգարաններ և կոյուղու հավաքման հորեր:

➤ **գ. Կապս**

Բնակավայրի խմելու ջրի ներտնտեսային համակարգը կառուցվել է 1961 թ, այն ունի 7 կմ երկարություն: Ջրամատակարարումն իրականացվում է ինքնահոս եղանակով: Խմելու ջրամատակարարման բաշխիչ ցանցը քայքայված վիճակում է, ինչը պատճառ է դառնում ջրամատակարարման անընդհատ խափանումների և ջրի՝ մեծ ծավալով կորուստների:

Բնակավայրի կոյուղու համակարգն ունի 1.0 կմ ընդհանուր երկարություն, որը նույնպես քայքայված վիճակում է և ունի վերանորոգման կարիք: Միայն դպրոցն ու գյուղապետարանն ունեն միասնական կոյուղու կոլեկտոր, որը գյուղի արևմտյան մասում լցվում է Ախուրյան գետ: Կոլեկտորը կառուցվել է թուջե խողովակներից և ունի շուրջ 13 միացում:

➤ **գ. Վահրամաբերդ**

Գյուղի բաշխիչ ցանցն ունի մի քանի միացումներ Ղազանչիի ջրատարից, քանի որ վերջինս անցնում է Վահրամաբերդ գյուղի մոտակայքով: Անմիջապես ջրատարից իրականացվող ջրամատակարարման շնորհիվ գյուղն ունի շուրջօրյա ջրամատակարարում: Մոտ 95% տնային տնտեսություններում տեղադրված են ջրաչափեր:

Կարիտաս ծրագրի շրջանակներում գյուղի ջրամատակարարման բաշխիչ ցանցում կառուցվել է HDPE և մասամբ պողպատե խողովակներով:

Գյուղն ունի կոյուղու մեկ կոլեկտոր, որի ընդհանուր երկարությունը կազմում է մոտ 1.5կմ: Այն կառուցվել է 1970-ական թվականներին և իրականացված է 200մ տրամագծով պողպատե խողովակներից: Կոլեկտորը սկսվում է գյուղապետարանից և լցվում գյուղի հարավ-արևելյան հատվածով անցնող գետի մեջ:

100-150մ կոյուղագիծ կառուցվել է նաև 1990-ականներին գյուղի «Լենգես» թաղամասում: Այն ավարտվում է գյուղի արևելյան հատվածում գտնվող կոյուղու մաքրման կայանում, որը չի գործում:

Տնային տնտեսությունների մոտ 10% ունեն սեպտիկ հորեր:

➤ **գ. Ոսկեհասկ**

Գյուղի բաշխիչ ցանցը կառուցվել է 1965թ., ունի մոտ 10կմ երկարություն և բաղկացած է պողպատե խողովակներից, որոնք գտնվում են վատ վիճակում: Բաշխիչ ցանցի վերանորոգումն ու ջրաչափերի տեղադրումը չափազանց հրատապ է:

Գյուղը ջրամբար չունի, ինչի հետևանքով գյուղի մի շարք թաղամասեր օրվա պիկ ժամերին ջուր չեն ստանում: Ախուրյանի տարածքաշրջանի գլխավոր կոլլեկտորից դեպի գյուղ կա 4 ճյուղավորում, որոնց ընդհանուր երկարությունը մոտ 3 կմ է: Ճյուղավորումներին տեղադրված են չորս ջրաչափերը, որոնք չեն աշխատում:

Ծրագրի այս Փուլ III-ի շրջանակներում գյուղի արևելյան մասում՝ սարալանջին, կկառուցվի նոր ջրամբար: Ջրամբարը բաղկացած կլինի 2x250մ³ տարողություններից, որոնք կապահովեն 500 մ³ գումարային ծավալ: Ամբողջ գյուղում կիրականացվի նաև ջրամատակարարման նոր բաշխիչ ցանց:

Ախուրիկ, Բայանդուր, Ղարիբջանյան, Գետք և Երազգավորս գյուղերը տեղակայված են Ախուրյանի Տարածաշրջանային գլխավոր կոլեկտորի հարավում (հոսանքն ի վար): Գյուղերը կիսում են Ոսկեհասկ գյուղից դեպի արևելք ընկած ջրամբարը, որը սակայն չի գործում և վերկանգնամն կարիք ունի:

➤ **գ. Երազգավորս**

Գյուղը ջուր է ստանում Ախուրյանի տարածաշրջանային գլխավոր կոլլեկտորից 400մ և 200 մ տրամագիծ ունեցող պողպատե ճյուղավորումներով:

Գյուղի բաշխիչ ցանցը, որի ընդհանուր երկարությունը 13.8 կմ է, կառուցվել է 1980-1982թթ. և իրականացված է պողպատի խողովակներով: Այն գտնվում է վատ վիճակում: Բոլոր տնային տնտեսությունները միացված են բաշխիչ ցանցին, սակայն գյուղի ներքևի մասի տներին ջուր չի հասնում: Տների մոտ 50%-ն ունեն ջրհորներ, բացակայում են ջրաչափերը:

Կոյուղու կոլեկտորները կառուցվել են ԽՍՀՄ տարիներին և տեղակայված են հիմնական ճանապարհներին: Կոյուղու հավաքման համակարգը դատարկվում է Բայանդուր գյուղի մաքրման կայան: Կոլեկտորների մոտ 40%-ը գործում են:

3.2. Նախատեսվող գործունեության նկարագրություն

Ծրագիրն ընդգրկում է ջրամատակարարման ցանցի վերակառուցում, նորացում ու ընդլայնում, ինչպես նաև կոյուղու համակարգին առնչվող որոշ հրատապ միջոցառումներ Շիրակ Զրմուղ-կոյուղու սպասարկման տարածքում: Նախատեսվող աշխատանքներն իրականացվում են հաշվի առնելով 2009-2014թթ. ընթացքում իրականացված ծրագրի նախորդ 1 և 2 փուլերի աշխատանքները, դրանց ավարտից հետո շահագործման փորձը և հետագա ուսումնասիրությունները:

Ծրագրում ընդգրկված բնակավայրերում ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերի բարելավման նպատակով աշխատանքային նախագծով առաջարկվել են հետևյալ միջոցառումները.

➤ **ք. Գյումրի**

- 5118մ ընդհանուր երկարությամբ կոյուղու խողովակների փոխարինում de110-de500 տրամագծի պոլիէթիլենե խողովակներով, որից 2892մ-ը՝ de315-de500 տրամագծի խողովակներով:

Ստորև ներկայացված աղյուսակում բերված են քաղաքի այն տարածքները, որոնք կոյուղագծերի փոխարինման համար եղել են առաջնահերթ՝ կապված փլուզման կամ խոշոր խցանումների հետևանքով առաջացրած շահագործման խնդիրների հետ: Կոյուղագծերի անհապաղ փոխարինում պահանջվող փողոցների ցանկը ներկայացված է աղյուսակ 4-ում:

Աղյուսակ 4 . Կոյուղագծերի փոխարինման տեղամասեր

No.	Փողոցի անվանումը	Կոյուղագծերի պարամետրերը (տրամագիծ, երկարություն)
1.	Տեքստիլագործների փողոց	de 250, L=248
2.	Կոմիտեների փողոց	de 315, L=460
3.	Մուսայելյան փողոց	de 500, L=752
4.	Մսի կոմբինատ	de 400, L=800; de 250, L=150; de 200, L=143;
5.	Անի թաղամաս, 7-րդ փողոց	de 400, L=241
6.	Աթոյան-Ղուկասյան փողոց	de 250, L=420
7.	Մանուշյան փողոց, 16 և 18 շենքերի բակ	de 250, L=172
8.	Հ. Սարգսյան փողոց, թիվ 1 անցում Կամո 50 շենքից դեպի Շիրակացի փողոց	de 250, L=249
9.	Ախուրյանի խճուղի 2ա շենքի մոտ	de 250, L=45
10.	Կ. Դեմիրճյան փողոց 73 շենքի մոտ	de 200, L=43
11.	Տրդատ Ճարտարապետի փողոց	de 315, L=196
12.	Վ. Սարգսյան փողոց 6 շենքի մոտ	de 200, L=58
13.	Իսահակյան փողոց , Զեպրինի փողոցից դեպի Մհեր Մկրտչյան	de 315, L=388; de 315, L=56
14.	Տիգրան Մեծ փողոց 5 շենքի մոտ	de 200, L=98
15.	Զիվանի փողոց՝ Մայակովսկի փողոցից դեպի Տերյան փողոց	de 315, L=135
16.	Շիրակացի փողոց 66 շենքի բակ	de 200, L=96
17.	Նեկրասով փողոց՝ Երևանյան խճուղուց դեպի 3-րդ հիվանդանոց	de 250, L=181
18.	Ծննդատան 1 փողոց	de 250, L=187

➤ **գ. Ախտորիկ**

- L=1282մ ընդհանուր երկարությամբ արտաքին ջրատարի վերակառուցում de160 տրամագծի պոլիէթիլենե խողովակներով:
- 8922 մ ընդհանուր երկարությամբ de50-de225 տրամագծի պոլիէթիլենե խողովակներից բաշխիչ ցանցի ջրագծերի կառուցում և վերակառուցում:
- Ընդհանուր թվով 273 տնային միացումների մուտքագծերի հիմնովին վերակառուցում՝ ջրաչափական հորերի կառուցմամբ:
- Բաշխիչ ցանցում 12 փականային հանգույցների և 2 հիդրանտային հորերի կառուցում և վերակառուցում:

➤ **գ. Առափի**

- L=330 մ ընդհանուր երկարությամբ արտաքին ջրատարի վերակառուցում DN 250 տրամագծի պողպատե խողովակներով:
- 13 134 մ ընդհանուր երկարությամբ de50-de225 տրամագծի պոլիէթիլենե խողովակներից բաշխիչ ցանցի ջրագծերի կառուցում և վերակառուցում:
- Ընդհանուր թվով 480 տնային միացումների մուտքագծերի հիմնովին վերակառուցում՝ ջրաչափական հորերի կառուցմամբ:
- Բաշխիչ ցանցում 12 փականային հանգույցների և 6 հիդրանտային հորերի կառուցում և վերակառուցում
- Ջրամատակարարման բաշխիչ ցանցի կառավարման և համակարգի ներսում բարձր ճնշումների կարգավորման նպատակով գյուղի տարբեր հատվածներում 1 ճնշման կարգավորիչ և 1 ջրամաշափական հորերի կառուցում:

➤ **գ. Այգաբաց**

- 8736 մ ընդհանուր երկարությամբ de50-de225 տրամագծի պոլիէթիլենե խողովակներից բաշխիչ ցանցի ջրագծերի կառուցում և վերակառուցում:
- գ յուրյուն ունեցող 250մ³ և 150 մ³ ՕԿՋ-ներ վերանորոգում՝ տարածքի ցանկապատմամբ
- Ընդհանուր թվով 170 տնային միացումների մուտքագծերի հիմնովին վերակառուցում՝ ջրաչափական հորերի կառուցմամբ:
- Բաշխիչ ցանցում 9 փականային հանգույցների և 2 հիդրանտային հորերի կառուցում և վերակառուցում
- Ջրամատակարարման բաշխիչ ցանցի կառավարման նպատակով ջրամատակարարման 1 հորի կառուցում:

➤ **գ. Բայանդուր**

- L=6398մ ընդհանուր երկարությամբ de50-de225 տրամագծի պոլիէթիլենե խողովակներից բաշխիչ ցանցի ջրագծերի կառուցում և վերակառուցում:
- Ընդհանուր թվով 147 տնային միացումների մուտքագծերի հիմնովին վերակառուցում՝ ջրաչափական հորերի կառուցմամբ:
- Բաշխիչ ցանցում 7 փականային հանգույցների և 2 հիդրանտային հորերի կառուցում և վերակառուցում:

Հիմնական հողային և ռեկուլտիվացիոն աշխատանքների ծավալները կազմում են.

- փորում՝ 7258 մ³
- հետլիցք՝ 4777մ³
- հողային ծածկույթի վերականգնում՝ 3482 մ³:
-

➤ **գ. Գետք**

- L=2409 մ ընդհանուր երկարությամբ de50-de225 տրամագծի պոլիէթիլենե խողովակներից բաշխիչ ցանցի ջրագծերի կառուցում և վերակառուցում:
- Ընդհանուր թվով 80 տնային միացումների մուտքագծերի հիմնովին վերակառուցում՝ ջրաչափական հորերի կառուցմամբ:
- Բաշխիչ ցանցում 5 փականային հանգույցների և 1 հիդրանտային հորերի կառուցում և վերակառուցում:

Հիմնական հողային և ռեկուլտիվացիոն աշխատանքների ծավալները կազմում են.

- փորում՝ 2894 մ³
- հետլիցք՝ 1951 մ³
- հողային ծածկույթի վերականգնում՝ 2124 մ³:

➤ **գ. Ղարիբջանյան**

- L=7672 մ ընդհանուր երկարությամբ de50-de225 տրամագծի պոլիէթիլենե խողովակներից բաշխիչ ցանցի ջրագծերի կառուցում և վերակառուցում:
- Ընդհանուր թվով 200 տնային միացումների մուտքագծերի հիմնովին վերակառուցում՝ ջրաչափական հորերի կառուցմամբ:
- Բաշխիչ ցանցում 13 փականային հանգույցների և 7 հիդրանտային հորերի կառուցում և վերակառուցում:
- Ջրամատակարարման բաշխիչ ցանցի կառավարման նպատակով ջրամատակարարման 1 հորի կառուցում:

Հիմնական հողային և ռեկուլտիվացիոն աշխատանքների ծավալները կազմում են.

- փորում՝ 8861 մ³
- հետլիցք՝ 5945 մ³
- հողային ծածկույթի վերականգնում՝ 6728 մ³:

➤ **գ. Հացիկ**

- L=9192 մ ընդհանուր երկարությամբ de50-de225 տրամագծի պոլիէթիլենե խողովակներից բաշխիչ ցանցի ջրագծերի կառուցում և վերակառուցում:
- Ընդհանուր թվով 254 տնային միացումների մուտքագծերի հիմնովին վերակառուցում՝ ջրաչափական հորերի կառուցմամբ:
- Բաշխիչ ցանցում 12 փականային հանգույցների և 1 հիդրանտային հորերի կառուցում և վերակառուցում:

Հիմնական հողային և ռեկուլտիվացիոն աշխատանքների ծավալները կազմում են.

- փորում՝ 10715 մ³
- հետլիցք՝ 7174 մ³:

➤ **գ. Հայկական**

- L=1103 մ ընդհանուր երկարությամբ արտաքին ջրատարի վերակառուցում de125 տրամագծի պոլիէթիլենե խողովակներով:
- L=7652 մ ընդհանուր երկարությամբ de50-de225 տրամագծի պոլիէթիլենե խողովակներից բաշխիչ ցանցի ջրագծերի կառուցում և վերակառուցում:
- Ընդհանուր թվով 267 տնային միացումների մուտքագծերի հիմնովին վերակառուցում՝ ջրաչափական հորերի կառուցմամբ:
- Բաշխիչ ցանցում 11 փականային հանգույցների և 5 հիդրանտային հորերի կառուցում և վերակառուցում:

Հիմնական հողային և ռեկուլտիվացիոն աշխատանքերի ծավալները կազմում են.

- փորում՝ 10369 մ³
- հետլիցք՝ 6882մ³
- հողային ծածկույթի վերականգնում՝ 6311 մ³:

➤ **գ. Կապս**

- L=822 մ ընդհանուր երկարությամբ արտաքին ջրատարի վերակառուցում de160 տրամագծի պոլիէթիլենե խողովակներով:
- L=5788 մ ընդհանուր երկարությամբ de50-de225 տրամագծի պոլիէթիլենե խողովակներից բաշխիչ ցանցի ջրագծերի կառուցում և վերակառուցում:
- Ընդհանուր թվով 180 տնային միացումների մուտքագծերի հիմնովին վերակառուցում՝ ջրաչափական հորերի կառուցմամբ:
- Բաշխիչ ցանցում 7 փականային հանգույցների և 6 հիդրանտային հորերի կառուցում և վերակառուցում:
- Ջրամատակարարման բաշխիչ ցանցի կառավարման և համակարգի ներսում բարձր ճնշումների կարգավորման նպատակով գյուղի տարբեր հատվածներում 1 ճնշման կարգավորիչ և 1 ջրամաչափական հորերի կառուցում:

Հիմնական հողային և ռեկուլտիվացիոն աշխատանքերի ծավալները կազմում են.

- փորում՝ 6882 մ³
- հետլիցք՝ 6580մ³:

➤ **գ. Վահրամաբերդ**

- L=5430 մ ընդհանուր երկարությամբ de50-de225 տրամագծի պոլիէթիլենե խողովակներից բաշխիչ ցանցի ջրագծերի կառուցում և վերակառուցում:
- Ընդհանուր թվով 130 տնային միացումների մուտքագծերի հիմնովին վերակառուցում՝ ջրաչափական հորերի կառուցմամբ:
- Բաշխիչ ցանցում 9 փականային հանգույցների և 2 հիդրանտային հորերի կառուցում և վերակառուցում:
- Ջրամատակարարման բաշխիչ ցանցի կառավարման և համակարգի ներսում բարձր ճնշումների կարգավորման նպատակով գյուղի տարբեր հատվածներում 2 ճնշման կարգավորիչ և 1 ջրամաչափական հորերի կառուցում:

Հիմնական հողային և ռեկուլտիվացիոն աշխատանքերի ծավալները կազմում են.

- փորում՝ 6170 մ³
- հետլիցք՝ 4054մ³
- հողային ծածկույթի վերականգնում՝ 4672 մ³:

➤ **գ. Ոսկեհասկ**

- L=1200 մ ընդհանուր երկարությամբ արտաքին ջրատարի վերակառուցում DN 150 տրամագծի պողպատե խողովակներով:
- L=15902 մ ընդհանուր երկարությամբ de50-de225 տրամագծի պոլիէթիլենե խողովակներից բաշխիչ ցանցի ջրագծերի կառուցում և վերակառուցում:
- Ընդհանուր թվով 488 տնային միացումների մուտքագծերի հիմնովին վերակառուցում՝ ջրաչափական հորերի կառուցմամբ:
- Բաշխիչ ցանցում 12 փականային հանգույցների և 5 հիդրանտային հորերի կառուցում և վերակառուցում:

- Ջրամատակարարման բաշխիչ ցանցի կառավարման և համակարգի ներսում բարձր ճնշումների կարգավորման նպատակով գյուղի տարբեր հատվածներում 2 ճնշման կարգավորիչ և 1 ջրամաչափական հորերի կառուցում:

Հիմնական հողային և ռեկուլտիվացիոն աշխատանքների ծավալները կազմում են.

- փորում՝ 18151 մ³
- հետլիցք՝ 11955 մ³
- հողային ծածկույթի վերականգնում՝ 14354 մ³:

➤ **գ. Երազգավորս**

- L=7348 մ ընդհանուր երկարությամբ de50-de225 տրամագծի պոլիէթիլենե խողովակներից բաշխիչ ցանցի ջրագծերի կառուցում և վերակառուցում:
- Ընդհանուր թվով 344 տնային միացումների մուտքագծերի հիմնովին վերակառուցում՝ ջրաչափական հորերի կառուցմամբ:
- Բաշխիչ ցանցում 11 փականային հանգույցների և 2 հիդրանտային հորերի կառուցում և վերակառուցում:

Հիմնական հողային և ռեկուլտիվացիոն աշխատանքների ծավալներն են.

- փորում՝ 9183 մ³
- հետլիցք՝ 6158 մ³:

➤ **ՕԿՋ-ներ**

- Ախուրիկ, Բայանդուր, Ղարիբջանյան, Գետք և Երազգավորս գյուղերին սպասարկող գոյություն ունեցող 2x500մ³ ՕԿՋ-ներ վերանորոգում

Գյուղերում նախատեսված ջրամատակարարման բարելավմանն ուղղված աշխատանքների տեխնիկական մանրամասներն ըստ առանձին համայնքների բերված են [Հավելված 4](#)-ում:

3.3. Բնակչության և նախատեսված աշխատանքների համար կանխատեսվող ջրապահանջ

Մինչև 2040 թ. հնարավոր ջրապահանջարկի աճը բավարարելու նպատակով ծրագրում օգտագործված նախագծային չափանիշները համապատասխանում են ՀՀ 2.04.02-84 և RABC 31-01-2014 նորմերի պահանջներին, որոնց համաձայն միջին տեսակարար սպառումը կազմում է 160-230 լ/մարդ/օր (կենցաղային, բյուջետային, տնտեսվարող սեկտորներ, ջրակորուստներ)՝ գումարած 10-20% արտադրական օբյեկտների սպառման համար:

բ. Գյումրի

Կենցաղային, ինստիտուցիոնալ և առևտրային ջրապահանջ = 150 լ/մարդ/օր

Արդյունաբերական ջրապահանջ (10%) = 15 լ/մարդ/օր

Զիազվարկված ջուր - արտադրվող ջրի նվազագույնը 20% ($f_L = 1.25$) = 45 լ/մարդ/օր

Միջին ջրապահանջ = 210 լ/մ/օր

Առավելագույն օրական ջրապահանջ=273 լ/մարդ/օր

Շիրակի մարզի գյուղեր

Կենցաղային, ինստիտուցիոնալ և առևտրային ջրապահանջ = 125 լ/մարդ/օր

Գյուղատնտեսական ջրապահանջ = 35 լ/մարդ/օր

Զիազվարկված ջուր- արտադրվող ջրի նվազագույնը 20% ($f_L = 1.25$) = 40 լ/մարդ/օր

Միջին ջրապահանջ = 200 լ/մ/օր

Առավելագույն օրական ջրապահանջ=260 լ/մարդ/օր

Համաձայն ՀՀ Ազգային վիճակագրական ծառայության վիճակագրական տարեգրքերի տվյալների, Հայաստանի քաղաքներում բնական աճը վերջին 5 տարիների ընթացքում կազմել է + 0.5%: Գյումրի քաղաքի բնակչության թվաքանակն ըստ 2016թ. հունվարի 1-ի դրությամբ կազմում է 117.7 հազ. մարդ: Մինչև 2040 թվականի պլանավորման հորիզոնը ենթադրվում է ընդհանուր առմամբ մոտ + 0.5% բնական աճ, համաձայն որի Գյումրի քաղաքի և ծրագրում ընդգրկված հարակից 12 գյուղերի բնակչությունը կունենան հետևյալ հաշվարկային ցուցանիշները.

Աղյուսակ 5. Գյումրի քաղաքի և հարակից գյուղերի բնակչության հաշվարկային աճն ըստ տարիների

Համայնքներ	Բնակչության ներկայիս և կանխատեսվող թվաքանակն ըստ տարեթվերի	
	2016	2040
Գյումրի	117,700	133,000
Առափի	2,023	2,280
Ոսկեհասկ	2,258	2,545
Հայկավան	1,598	1,801
Ղարիբջանյան	1,133	1,277
Ախուրիկ	1,268	1,429
Գետք	624	703
Երազգավորս	1,658	1,869
Բայանդուր	815	919
Այգաբաց	835	941
Հացիկ	1,199	1,351
Կապս	780	879
Վահրամաբերդ	1,870	2,108

4. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՆԱՍԱԿԱՐ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԲԱՑԱՌՄԱՆՆ ՈՒ ՆՎԱԶԵՑՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

4.1. ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՈՒ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Գյումրի քաղաքի և հարակից 12 գյուղերի ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերի վերակառուցման աշխատանքները ներառում են.

- ջրամատակարարման բաշխիչ ցանցի կառուցման և վերակառուցման աշխատանքներ,
- առկա բաշխիչ ցանցի ապաշահագործում
- որոշ տեխնիկական լուծումների իրականացում ջրամբարներում՝ դրանց աշխատանքն ավելի ճկուն դարձնելու համար:

Վերոհիշյալ աշխատանքները բնապահպանական և սոցիալական տեսանկյունից պարունակում են ցածր ռիսկեր: Ծրագրի իրականացումը որևէ անդառնալի ազդեցություն չի ունենա շրջակա միջավայրի վրա: Տեղայնացված որոշ բացասական ազդեցություններ կանխատեսվում են շինարարության փուլում, սակայն դրանք կունենան սահմանափակ ազդեցություն և կկրեն ժամանակավոր բնույթ: Այդ բացասական ազդեցությունները կնվազեցվեն մեղմացման միջոցառումների միջոցով:

Հնարավոր ազդեցությունները և դրանց բնույթը ներկայացվում է ստորև բերված ընդհանրացված աղյուսակում:

Շին. աշխատանքների բնույթը	Բնապահպանական և սոցիալական հնարավոր ազդեցություններ	Ազդեցությունների բնույթը			
		մեծ	չափավոր	փոքր	աննշան
Ջրամատակարարում					
Խրամուղիների փոքրում, խողովակների տեղադրում և մոնտաժում, հետվիցք, վերականգնում, տնային միացումների իրականացում	Փոշու արտանետումներ		+		
	Աղմուկ և թրթռումներ		+		
	Շրջակա միջավայրի աղտոտում (վառելանյութեր, քսայուղեր, շինարարական ու կենցաղային աղբ)			+	
	Երթևեկություն և փոխադրամիջոցներ		+		
	Մակերևութային ջրերի որակ				+
	Ֆլորա և ֆաունա				+
	Տրանսպորտի ու հետիոտն ճանապարհների խաթարում			+	
	Սոցիալ-տնտեսական			+	
	Մշակութային ժառանգություն				+

Նախատեսվող գործունեության իրականացման արդյունքում բնական լանդշաֆտների, մակերևութային և ստորերկրյա ջրային ռեսուրսների, բուսական ու կենդանական տեսակների վրա բացասական ազդեցություններ չեն կանխատեսվում:

Ծրագրի շրջանակներում իրականացվող ոչ մշտական աշխատանքների համար կանաչ տարածքներ չեն ընդգրկվելու, չկա նաև վերաբնակեցման անհրաժեշտություն: Բոլոր շինարարական աշխատանքները նախատեսվում է իրականացնել համայնքային նշանակության տարածքներում,

որոնց վերաբերյալ տեղական ինքնակառավարման մարմինների կողմից կան տրված համապատասխան թույլտվություններ:

Նախագծի իրականացման տարածքներում /ազդեցության գոտում/ բացակայում են բնապահպանական տեսանկյունից խոցելի կամ բնության հատուկ պահպանվող տարածքները, ինչպես նաև պատմամշակութային արժեքները:

Ծրագրի իրականացման արդյունքում ակնկալվող բացասական բնապահպանական ազդեցությունները հետևյալներն են.

- աղմուկ, փոշի, շահագործվող շինարարական մեքենաներից արտանետումներ,
- ճանապարհների լրացուցիչ ծանրաբեռնվածություն՝ պայմանավորված շինարարության ժամանակ տրանսպորտային միջոցների կիրառմամբ,
- շինարարական տարածքներում հողի տեղայնացված էրոզիա,
- շրջակա միջավայրի և ջրային ռեսուրսների աղտոտում շինարարական և կենցաղային աղբով:

Ծրագրի շրջանակներում կատարված աշխատանքները նկատելի դրական ազդեցություն կունենան բնակչության սոցիալական վիճակի վրա: Արդյունքում կբարելավվի Շիրակի մարզի Գյումրի քաղաքի բնակչության կյանքի որակը՝ խթան հանդիսանալով տեղի բնակչության սոցիալական-տնտեսական պայմանների բարելավման համար:

Հնարավոր բոլոր բացասական ազդեցությունները կնվազեցվեն (կմեղմացվեն) բնապահպանական և սոցիալական կառավարման պլանում (ՇՄՄԿՊ) ներառված մեղմացնող միջոցառումների իրականացման և վերահսկման արդյունքում, որը բերված է [Հավելված 1](#)-ում:

Ակնկալվում է, որ մեղմացման միջոցառումների իրականացման արդյունքում զգալի մնացորդային ազդեցություններ չեն լինի: Սոցիալական գործունեությունն ընդգրկված է նաև ԱԱԱ-ի հաշվետվությունում, որը ներկայացված է նախագծային փաստաթղթերին կից:

Դրանք հնարավոր է կանխել կամ նվազեցնել շինարարական լավ պարկտիկայի արդյունքում:

Վերականգնման աշխատանքների իրականացման արդյունքում ակնկալվում են հետևյալ դրական ազդեցությունները.

- ջրային ռեսուրսների առավել արդյունավետ օգտագործում,
- բնակիչների կենսամակարդակի բարելավում՝ պայմանավորված շուրջօրյա ջրամատակարարման ապահովմամբ,
- խմելու ջրի բարձր որակի ապահովում, ջրակորուստների կրճատում, ջրամատակարարման տևողության ավելացում, ջրային ռեսուրսների պահպանություն և կառավարում,
- խմելու ջրի աղտոտման վտանգի նվազում և վարակիչ հիվանդությունների ներթափանցման կանխում/բացառում,
- առողջական պայմանների բարելավում,
- ջրի հաշվառման համակարգի ներդրում և սպառման արդյունավետության բարձրացում:

Կապալառուն, շինարարը, հսկող և վերահսկող մարմինները պետք է խստորեն հետևեն ՇՄԿՊ-ով նախատեսված բնապահպանական մեղմացման միջոցառումների պատշաճ իրականացմանը:

4.2. ԹԱՓՈՆՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

Թափոնների կառավարման պլանի նպատակն է սահմանել շինարարության ընթացքում առաջացող թափոնների հեռացման և դրանց կրճատման սկզբունքները:

Նախատեսվող վերակառուցման աշխատանքների իրականացման ընթացքում ծրագրի ազդեցության գոտում հնարավոր է առաջանան տարբեր տեսակի թափոններ, որոնք կարող են բացասաբար ազդել շրջակա միջավայրի վրա (օր.՝ ջրային և հողային ռեսուրսների աղտոտում, մթնոլորտային օդի աղտոտում և այլն):

Անվտանգ թափոններ են շինարարական այն թափոնները, որոնք համարվում են ոչ վտանգավոր: Ծրագրի շրջանակներում ակնկալվող անվտանգ թափոնները հիմնականում կանխատեսվում են ավելցուկային գրունտի տեսքով: Այս անվտանգ թափոնների փոխադրումը կամ հեռացումը դեպի համապատասխան վայրեր, նույնպես կարող է բացասական բնապահպանական ազդեցություններ ունենալ, սակայն դրանք կկրեն կարճատև բնույթ: Երթևեկության վրա շինարարական տրանսպորտի ազդեցությունը մեղմացնելու և խցանումներից խուսափելու նպատակով կիրականացվի ճանապարհային երթևեկության գործողությունների պլանավորում՝ պիկ ժամերին տեղական ճանապարհներից խուսափելու համար:

Վտանգավոր թափոնները կարող են լինել բոնկվող, քայքայվող, ճառագայթող կամ թունավոր և ունենալ ծանր հետևանքներ: Շինարարության ժամանակ առաջացող վտանգավոր թափոնների շարքին են դասվում մարտկոցները, ներկերն ու լուծիչները, օգտագործված յուղեր, քուկներ և քիմիական այլ թափոնները:

Կեղտաջրերը կարող են արտահայտվել շինարարական հոսքաջրերի (կարող են առաջանալ շին. հրապարակներում) և կենցաղային կոյուղաջրերի (աշխատողների տնտեսական գործունեության արդյունք) տեսքով և պարունակել տարբեր աղտոտիչներ ու պաթոգեն տարրեր:

Վերը նշված թափոնների վնասակար ազդեցություններից խուսափելու համար նախընտրելի են կառավարման հետևյալ սկզբունքները.

- թափոնների առաջացման կրճատում կամ խուսափում,
- թափոնների հնարավորինս կրկնօգտագործում կամ վերամշակում,
- ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով առաջացող թափոնների հեռացում՝ համաձայնեցված համայնքի ղեկավարի կամ լիազոր մարմինների հետ,
- գոյություն ունեցող հանքավայրերի և թափոնների հեռացման վայրերի օգտագործում (նախագծման փուլում ձեռք բերված համաձայնագրերում ամրագրված պայմանների համաձայն),
- շինանյութերի (իներտ նյութեր, բետոն) ձեռք բերում լիցենզավորված մատակարարներից կամ գոյություն ունեցող հանքավայրերի օգտագործում,
- թափոնների ժամանակավոր կուտակման վայրերի հստակ սահմանում (բնապահպանական տեսանկյունից առավել ընդունելի վայրեր, որոնք կհաստատվեն համապատասխան լիազոր մարմինների կողմից):

Շինարարության ընթացքում վերոնշյալ սկզբունքների կիրառումը թույլ կտա նվազագույնի հասցնել թափոնների կառավարման հետ կապված բնապահպանական ռիսկերը:

Ծրագրի շրջանակներում նախատեսված շինարարական աշխատանքների ժամանակ շին. աղբը և ավելորդ բնահողը նախատեսված է տեղափոխել Գյումրու քաղաքապետարանի կողմից հատկացված աղբավայր, իսկ որոշ հատվածներում դրանք կհարթեցվեն տեղում:

Շինարարական նյութերի մատակարարումը մինչև շինարարական հրապարակներ նախատեսված է իրականացնել ավտոմոբիլային տրանսպորտով, որոնք շին. հրապարակներ կհասցվեն քաղաքային ու դաշտային գրունտային ճանապարհներով՝ չխախտելով ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարության պահանջները:

5. ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Բաժինը կլրացվի նախատեսվող հանդիպումներից հետո:

6. ԱԶԴԱԿԻՐ ՀԱՆՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ ԲՈՂՈՔՆԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ՄԵԽԱՆԻԶՄ

Արտաքին շահագրգիռ կողմերի և ազդակիր հասարակության համար բողոքների ներկայացման մեխանիզմը մի գործընթաց է, որը հիմնականում ուղղված է ջրամատարակարման և ջրահեռացման ոլորտի այս ծրագրի ազդակիր համայնքների կողմից ծրագրի հետ կապված դժգոհությունների ստացմանը, գնահատմանն ու լուծմանը: Բողոքների ներկայացման մեխանիզմը տարբերվում է վեճերի լուծման այլ ձևերից (օրինակ դատարաններ, վարչական համակարգեր, և այլն), քանի որ այն առաջարկում է խնդիրները կարգավորել տեղում հիմնված, պարզեցված և փոխշահավետ ճանապարհով:

Տեղեկության տարածման մեթոդների և հանրային խորհրդակցության վերաբերյալ առավել մանրամասն տեղեկատվություն ներկայացված է նախագծային փաստաթղթերի մաս կազմող Շահառուների ներգրավման պլանի հաշվետվությունում: Վերջինումս հանրության իրազեկման և նրանց հետ հաղորդակցման մեթոդների առումով կարևորվում են.

- հանրության հետ պաշտոնական և ոչ պաշտոնական հանդիպումները,
- հանրության շրջանում տեղեկատվական թերթիկների տարածքում, որոնք պարունակում են տեղեկատվություն ծրագրի աշխատանքների և բողոքների ներկայացման ընթացակարգերի վերաբերյալ,
- ՇՄՄԱԳ/ԲԿՊ,
- շին. հրապարակներում տեղեկատվական վահանակների անհրաժեշտությունը,
- անհրաժեշտության դեպքում՝ հեռուստատեսային հայտարարությունները և այլն:

Տարաբնակեցման քաղաքականության շրջանակի առկայությունը ևս կարևորվում է: Այն իրենից ներկայացնում է տարաբնակեցման կամ հողի ձեռքբերման քաղաքականություն, որի անհրաժեշտությունը կարող է առաջանալ այս գործընթացի իրականացման ժամանակ: Այն ևս ներկայացված է նախագծային փաստաթղթերին կից:

Բողոքների կառավարման պատշաճ նախագծված և իրականացվող գործընթացները կարող են օգտակար լինել թե՛ նախատեսվող գործունեությունն իրականացնողների և թե՛ համայնքների համար՝ ավելացնելով փոքր վեճերի արագ, էժան և արդար լուծման հավանականությունը այնպիսի լուծումների միջոցով, որոնք ողջամտորեն բավարարում են երկու կողմերին էլ, առանց բողոքները այլ (պաշտոնական) վեճերի լուծման մարմին տեղափոխելու: Բողոքների ներկայացման մեխանիզմները կարող են օգնել բացահայտելու և լուծելու խնդիրները, նախքան դրանք պաշտոնական վեճերի լուծման ավելի բարձր մակարդակի, այդ թվում՝ դատական կարգով լուծման մեթոդներին կհասնեն: Բողոքների ներկայացման մեխանիզմի արդյունավետ գործունեության համար կարևոր է սահմանել բողոքներին ընթացք տալու կառուցվածքը և բաշխել մեխանիզմի իրականացման պատասխանատվությունները և դրանք պարզաբանել շահագրգիռ կողմերին:

Բողոքների ներկայացման մեխանիզմը թույլ կտա, որպեսզի դիմողը բողոք ներկայացնի շինարարական աշխատանքների ժամանակ ցանկացած որոշման, պրակտիկայի կամ անհանգստության համար, որոնց վերաբերյալ առկա է անհամաձայնություն: Հանրային քննարկումների ընթացքում ծրագրի շահառուներն ու ազդակիր բնակիչները լիովին տեղյակ կպահվեն իրենց իրավունքների և բողոքների ներկայացման բանավոր և գրավոր ընթացակարգերի վերաբերյալ: Մրան կարելի է հասնել, ապահովելով լիարժեք մասնակցություն և խորհրդատվություն շահառուների հետ, ինչպես նաև հաստատելով ակտիվ հաղորդակցություն և կոորդինացում ազդակիր համայնքների, ԾԻԳ-ի/խորհրդատուի և շահառու համայնքների ղեկավարների միջև:

Բողոքների ներկայացման մեխանիզմը չի սահմանափակում գործը դատարան ներկայացնելու քաղաքացու իրավունքը բողոքի ներկայացման հենց առաջին փուլում:

Սույն ծրագրի շրջանակներում ԾԻԳ-ը/Խորհրդատուն պետք է ընդունի նախագծի հետ կապված բոլոր դիտողություններն ու բողոքները:

Ցանկացած անձ կամ կազմակերպություն իր առաջարկները, մեկնաբանություններն ու բողոքները կարող է ուղարկել ստորև նշված կոնտակտային տվյալներով (Ջրային տնտեսության պետական կոմիտե /պատճենը՝ Խորհրդատուի գրասենյակ)։

Գործատու / Հաճախորդ “Ջրային ոլորտի ծրագրերի իրականացման գրասենյակ”	Խորհրդատու GITEC/ՀԳՇ
Վարդանանց փակ. 8 (5-րդ հարկ), ք.Երևան 0010, Հայաստանի Հանրապետություն Կոնտակտային անձ՝ Ֆելիքս Մելիքյան Հեռ./Ֆաքս՝ (+ 374 10) 56 03 62 Էլ. փոստ՝ fmelikyan@wsdp.am	Կիկյան 16, Երևան 0028, Հայաստանի Հանրապետություն Կոնտակտային անձ՝ Մարկ Վեհիպալի Հեռ./Ֆաքս՝ (+374) 41 27 17 10 Էլ. փոստ՝ shirak@armenia.gitec-consult.com

Բոլոր դժգոհությունները պետք է գրանցվեն և իրենց պատասխանը ստանան 14 օրվա ընթացքում: Բողոքների ներկայացման ձևանմուշը բերված է [Հավելված 8](#)-ում, որը տեղական համայնքների համար պետք է լինի հասանելի: Ցանկացած այլ ձևաչափով միջնորդություններ ևս ընդունելի են:

Ստացված բողոքներին պետք է արձագանքել բանավոր կամ գրավոր՝ ըստ բողոքողի կողմից մեկնաբանությունների ու բողոքների ձևանմուշում նշված նախընտրելի մեթոդի: Կախված բողոքի բնույթից՝ ուղղիչ գործողություններ պետք է ձեռնարկել բողոքը ստանալուց հետո 3-5 օրվա ընթացքում: Ավելի բարդ լուծում պահանջող խնդիրների դեպքում, այս ժամկետը կարող է երկարել, իսկ ստացված բողոքներին տրված լուծումների վերաբերյալ տեղեկությունները պետք է արձանագրվեն:

Անհատները, որոնք ներկայացնում են իրենց դիտողություններն ու բողոքները իրավունք ունեն պահանջելու, որպեսզի իրենց անունը պահվի գաղտնի:

Բողոքները կամփոփվեն Բողոքների գրանցման մատյանում (բերված է [Հավելված 9](#)-ում), որը ներառում է նրանց ստացման ամսաթիվը, բողոքի բնույթը, տեղեկատվություն անհրաժեշտ ուղղիչ գործողությունների և խնդրի լուծման կարգավիճակի վերաբերյալ:

Շինարարական աշխատանքների հետ կապված դժգոհությունները պետք է կառավարվեն կապալառուների կողմից: Մինչ շինարարական աշխատանքների մեկնարկը, ծրագրի ազդակիր համայնքներում՝ բնակիչների համար հանրամատչելի վայրերում, կտեղադրվեն տեղեկատվական վահանակներ, որոնք կապահովեն բողոքարկման մեխանիզմի լիարժեք գործելը՝ պարունակելով նաև տեղեկատվություն պատասխանատու կազմակերպությունների կոնտակտային տվյալների վերաբերյալ:

Խորհրդատուն ամսական և եռամսյակային հաշվետվություններում պետք է ներկայացնի նաև տեղեկատվություն ստացված բողոքների և դրանց տրված լուծումների վերաբերյալ:

ՀԱՎԵԼՎԱԾ 1. Շրջակա միջավայրի կառավարման պլան

Պոտենցիալ ազդեցություն	Մեղմացնող միջոցներ	Կատարման ստուգման միջոցները	Պատասխանատվություն	Մոնիտորինգ
Առողջություն և աշխատանքային անվտանգություն				
Առողջություն և աշխատանքային անվտանգություն	Շինարարական աշխատուժին տրամադրել ուսուցում (ներառյալ ենթակապալառուներին, ժամանակավոր աշխատողներին և վարորդներին)	Իրականացրած և գրանցած ուսուցում	Կապալառու/ԾԻԳ	Ստուգել ուսուցման գրառումները
	Ապահովել շինհրապարակի տարածքի ցանկապատումը (որտեղ կիրառելի է) և լուսավորությունը: Մուտքը վտանգավոր տարածքներ կանխելու համար օգտագործել նախագգուշացնող նշաններ/արգելապատեր:	Շինհրապարակի ԱԱ պլանավորումը ավարտված է, առարկաները (նշանները, արգելապատերը) տեղադրված են	Կապալառու	Տեղանքի պատահական/ընտրովի ստուգումներ
	Ապահովել հրապարակում և տեղափոխման ուղեգծերում արագության սահմանները	Տեղադրված են արագության նշանները	Կապալառու	Տեղանքի պատահական / ընտրովի ստուգումներ
	Ապահովել աշխատողների համար անձնական պաշտպանական միջոցների (ԱՊՄ) օգտագործումը	Տեղում աշխատողների կողմից օգտագործվող ԱՊՄ	Կապալառու	Տեղանքի պատահական / ընտրովի ստուգումներ
	Պահպանել հրապարակում սպասարկման բարձր մակարդակը	Մաքրության պահպանում տեղում	Կապալառու	Տեղանքի պատահական / ընտրովի ստուգումներ
	Ծրագրի տարածքում ապահովել առողջության և անվտանգության (ԱԱ) պայմանները, ներառյալ արևից պաշտպանված գոտիներ, լոգասենյակներ և խմելու ջուր	ԱԱ պայմանների/ միջոցների տրամադրում տարածքում	Կապալառու	Տեղանքի պատահական / ընտրովի ստուգումներ
	Ապահովել միայն պաշտոնական աշխատողների մուտքը շին. ճամբարներ և շինարարական տարածքներ:	Մուտքի վերահսկում	Կապալառու	Տեղանքի պատահական /ընտրովի ստուգումներ
Հակահրդեհային միջոցառումներ	Ապահովել տեղում անհրաժեշտ հակահրդեհային միջոցների առկայությունը և գործող կանոնակարգերին դրանց համապատասխանությունը:	տեղում հակահրդեհային միջոցների առկայություն	Կապալառու	Տեղանքի մշտական ստուգումներ
Աշխատանքային իրավունքներ	Ապահովել բողոքարկման մեխանիզմի վերաբերյալ աշխատողների տեղեկացվածությունը	Բողոքարկման մեխանիզմի առկայությունը տեղում և բողոքների գրանցումները	ԾԻԳ/Կապալառու	Բողոքարկման մատյանի ստուգում
	Ապահովել նվազագույն աշխատանքային ստանդարտների համապատասխանություն ԱՄԿ-ի (Աշխատանքի միջազգային կազմակերպություն) կանոններին (երեխաների / հարկադիր աշխատանքի, խտրականության բացակայություն, աշխատանքային ժամեր, նվազագույն աշխատավարձ)	Բողոքարկման մեխանիզմի գրացումներ, Ուսուցումների (թրեյնինգների) գրանցումներ/ արձանագրություններ	Կապալառու	Ստուգումների հաշվետվություններ (այդ թվում աշխատանքային մարմիններից), բողոքների մատյանի և թրեյնինգի արձանագրության ստուգում
	Աշխատողների համար ապահովել հիգիենիկ, համապատասխան միջոցներ, ինչպես նաև առանձին զուգարաններ և հանդերձարաններ տղամարդ և կին աշխատողների համար	Համապատասխան հարմարությունները տեղում են	Կապալառու	Տեղանքի պատահական /ընտրովի ստուգումներ
	Ապահովել աշխատուժի մուտքը առաջնային բուժօգնության վայր, ապահովելով դեղատոմսեր:	Առողջապահական միջոցների առկայությունը տեղում	Կապալառու	Տեղանքի պատահական /ընտրովի ստուգումներ

Պոտենցիալ ազդեցություն	Մեղմացնող միջոցներ	Կատարման ստուգման միջոցները	Պատասխանատվություն	Մոնիտորինգ
	Ապահովել առողջապահական և անվտանգության բոլոր կանոններին և նորմերին համապատասխան պայմաններ ապահովելով համապատասխան տարածություն, ջրամատակարարում, կոյուղու և աղբի հեռացման համակարգ, համապատասխան պաշտպանություն տաքից, սառից, խոնավությունից, աղմուկից, հրդեհից և հիվանդություն հարուցող կենդանիներից, համապատասխան սանիտարական և լվացման միջոցներ, օդափոխություն, խոհարարական և պահեստային սենյակներ, բնական և արհեստական լուսավորություն, իսկ որոշ դեպքերում հիմնական բժշկական ծառայություններ:	Աշխատողների համար հարմար պայմաններ	Կապալառու	Տեղանքի պատահական/ ընտրովի ստուգումներ Ձրույցներ աշխատողների հետ
Մթնոլորտային օդը				
Փոշու արտանետումներ (հատկապես չոր պայմաններում)	Ապահովել ճանապարհների ջրումը չոր և քամու պայմաններում: Ընդհանուր առմամբ ճանապարհները պահել լավ վիճակում:	Ձրումը իրականացված է, ճանապարհները լավ վիճակում են	Կապալառու	Տեղանքի պատահական/ ընտրովի ստուգումներ, ճանապարհների ստուգում
	Ապահովել բեռնատարների ծածկումը՝ փոշու տարածումը կանխելու նպատակով	Բեռնատարները ծածկված են	Կապալառու	Տեղանքի պատահական /ընտրովի ստուգումներ
	Ապահովել երթևեկության օպտիմալ երթուղիներ: Ապահովել տրանսպորտային միջոցների արագության սահմանաչափերը գրունտային ճանապարհների վրա:	Արագության սահմանաչափերի նշաններ Վարորդների դասընթացների գրառումներ	Կապալառու	Տեղանքի պատահական /ընտրովի ստուգումներ
	Ապահովել պաշարների պատշաճ կառավարում (փխրուն նյութեր)՝ փոշու տարածումը նվազեցնելու համար: Նյութերի տեղափոխման գործողություններում նվազեցնել բեռնաթափման բարձրությունը, օրինակ՝ փխրուն նյութերի բեռնաթափումը	Լայնատարած փոշու տարածման բացակայություն	Կապալառու	Տեղանքի պատահական/ընտրովի ստուգումներ
Արտանետումներ սարքավորումներից և տրանսպորտային միջոցներից	Սարքավորումների և մեքենաների օգտագործում պատշաճ տեխնիկական պայմաններում: Ապահովել արտանետումների վերահսկման սարքավորումներ, որտեղ հնարավոր է (օրինակ, ֆիլտրեր)	Տեխնիկական մասնագրերի թերթ	Կապալառու	Ամեն անգամ, երբ շինհրապարակում օգտագործվում է նոր սարքավորում/մեքենա Տեղանքի պատահական/ ընտրովի ստուգումներ
	Օգտագործել քիչ ծծումբ պարունակող վառելիքներ, համապատասխան գործող իրավական դրույթների և տեղական առկայության:	Տեխնիկական մասնագրերի թերթ	Կապալառու	Տեղանքի պատահական /ընտրովի ստուգումներ
	Ապահովել երթևեկության օպտիմալ երթուղիներ՝ հնարավորինս նվազեցնելու համար տեղափոխման երկարությունները, հնարավորության դեպքում շրջանցելով բնակավայրերը	Ընտրված օպտիմալ երթուղի	Կապալառու	Տեղանքի պատահական/ընտրովի ստուգումներ
	Ապահովել, որ չօգտագործման դեպքում տրանսպորտային միջոցները և սարքավորումները անջատված լինեն:	Շարժիչները անջատված են	Կապալառու	Տեղանքի պատահական/ընտրովի ստուգումներ

Պոտենցիալ ազդեցություն	Մեղմացնող միջոցներ	Կատարման ստուգման միջոցները	Պատասխանատվություն	Մոնիտորինգ
Աղմուկ և թրթռումներ				
Շինհրապարակում շին. փոխադրամիջոցներից առաջացող աղմուկի և թրթռումների ազդեցություն	Սահմանափակել որոշակի սարքավորումների կամ գործողությունների աշխատանքային ժամերը, հատկապես համայնքային տարածքներում կամ բնակելի տների մոտ գործող շարժական միջոցները: Գիշերային ժամերին խուսափել տրանսպորտային միջոցների աշխատանքից:	22:00 մինչև 07:00 աշխատանքներ չեն իրականացվել / Բողոքարկման մեխանիզմ	Կապալառու	Տեղանքի պատահական/ընտրովի ստուգումներ, բողոքների վերանայում, աշխատողների հաշվեցուցակների վերանայում
	Ժամանակակից տեխնոլոգիաների օգտագործում և միաժամանակ աշխատող մեքենաների քանակի սահմանափակում	Բողոքարկման մեխանիզմ	Կապալառու	Ընտրովի ստուգումներ, բողոքների վերանայում
	Ապահովել ժամանակակից և լավ պահպանվող սարքավորումների օգտագործում (օրինակ՝ խլացուցիչների օգտագործում)	Տեխնիկական մասնագրերի թերթ	Կապալառու	Տեղանքի պատահական/ ընտրովի ստուգումներ
	Սահմանել տրանսպորտային միջոցների արագության սահմանաչափերը: Ստուգել վարորդների վարքը վարման արագության և անվտանգության նկատմամբ:	Արագությունը սահմանափակող նշաններ՝ Վարորդների ուսուցման դասընթացներ՝ որպես ինդուկցիոն ուսուցման մաս	Կապալառու	Տեղանքի պատահական /ընտրովի ստուգումներ, ուսուցման փաստաթղթերի վերանայում
	Պլանավորել մեքենաների ուղիները՝ հնարավորության դեպքում բնակավայրերից խուսափելու համար	Ընտրվել են ամենաապահով ուղիներ, Բողոքարկման մեխանիզմ	Կապալառու	Երթևեկության երթուղիների վերանայում, ներկայացված բողոքների վերանայում
	Աղմկոտ գործողություններ կատարող աշխատողների համար օգտագործել պաշտպանիչ լսողական սարքավորում	Պաշտպանիչ լսողական սարքավորումը օգտագործել է	Կապալառու	Տեղանքի պատահական/ընտրովի ստուգումներ
Երթևեկություն և փոխադրամիջոցներ				
Խափանումներ, աղմուկ և օդի աղտոտման ավելացում	Ճանապարհային երթևեկության գործողությունների պլանավորում՝ պիկ ժամերին տեղական ճանապարհներից խուսափելու համար, եթե հնարավոր է	Խուսափել են տեղական փողոցներում պիկ շամերին երթևեկելուց, Բողոքարկման մեխանիզմ	Կապալառու	Ներկայացված բողոքների վերանայում
	Ապահովել Օրագրի անձնակազմի անվտանգ վարումը (օրինակ՝ վերապատրաստման /ինդուկցիոն ուսուցման միջոցով):	Վարորդների ուսուցման դասընթացներ որպես ինդուկցիոն դասընթացների մաս	Կապալառու	Ուսուցման փաստաթղթերի վերանայում
	Որտեղ հնարավոր է, կազմակերպել փոխադրամիջոցներ / ավտոբուսներ աշխատողներին տեղափոխելու համար	Օգտագործվել են փոխադրամիջոցներ/ ավտոբուսներ	Կապալառու	Չկա
	Կանխել շինարարական նյութերի, սարքավորումների և մեխանիզմների տեղադրումը/պահեստավորումը երթևեկության գոտիներում:	Տեղում առկա են առանձնացված պահուստային տարածքներ	Կապալառու	Տեղանքի պատահական /ընտրովի ստուգումներ
Գրունտ և ստորգետնյա ջրեր				
Շրջակա միջավայրի աղտոտում / արտահոսք	Հավաքել և առանձնացնել թափոնները և ապահովել դրանք ապահով պահեստավորումը/պահպանումը, համապատասխան իրավական պահանջներին:	Կան թափոնների հավաքման տարածքներ, թափոնների գույքագրում	Կապալառու	Տեղանքի պատահական /ընտրովի ստուգումներ, Թափոնների գույքացուցակների ստուգում


Պոտենցիալ ազդեցություն	Մեղմացնող միջոցներ	Կատարման ստուգման միջոցները	Պատասխանատվություն	Մոնիտորինգ
	Ապահովել թափոնների հեռացումը կապալառուների միջոցով, որոնք լիցենզավորված են յուրաքանչյուր թափոնատեսակի մշակման / հեռացման / վերամշակման համար:	Թափոնների հեռացումը լիցենզավորված կապալառուների միջոցով	Կապալառու	Տեղանքի պատահական /ընտրովի ստուգումներ, Եթե հնարավոր է, ստուգել շինհրապարակից դուրս թափոնների հեռացման համար շինությունները
	Ապահովել շինարարական կեղտաջրերի, ներառյալ սանիտարական ջրերի պատշաճ մեկուսացումը և հեռացումը	Ջրի հեռացումը համապատասխանում է օրինական պահանջներին	Կապալառու	Տեղանքի պատահական/ընտրովի ստուգումներ
	Ապահովել աղտոտիչ նյութերի, ինչպիսիք են՝ վառելիքը, շինանյութը և թափոնները, համապատասխան և անվտանգ պահեստավորում: Ապահովել ներծծիչ (աբսորբենտ) և միջամտության նյութերի բավարար քանակություն և համապատասխան վայրեր՝ արտահոսքի դեպքում միջամտելու համար:	Վտանգավոր նյութերի անվտանգ պահեստավորում, արտահոսքի կանխման սարքավորումները տեղում են:	Կապալառու	Տեղանքի պատահական/ընտրովի ստուգումներ
	Իրականացնել մեկուսացման և արտահոսքի վերահսկման երկրորդական միջոցներ՝ տեխնոլոգիաներ կամ լիցքավորման աշխատանքների համար:	Մեկուսացման և արտահոսքի վերահսկման միջոցները տեղում են	Կապալառու	Տեղանքի պատահական/ընտրովի ստուգումներ
	Շինարարության ավարտից հետո ապահովել բոլոր արտահոսքերի անհապաղ մաքրում և աղտոտված տարածքների վերականգնում:	Աշտտողները անցել են պատրաստումը	Կապալառու/ՕԻԳ	Տեղանքի պատահական/ընտրովի ստուգումներ Մեկ ստուգում շինարարության ավարտից հետո
Գրունտի հետ աշխատելու լավագույն պրակտիկա	Ապահովել հեռացված գրունտի վերին շերտի պատշաճ պահպանումը: Շինարարությունից հետո գրունտի վերին շերտն օգտագործել որպես հետլիցք՝ տարածքի վերականգնման համար	Գրունտի վերին շերտը պահպանված է և կրկին օգտագործված է	Կապալառու	Տեղանքի պատահական/ընտրովի ստուգումներ
	Շինարարական աշխատանքների ավարտից հետո աշխատանքային տարածքի հնարավորին վերականգնում:	Վերականգնումը ավարտված է	Կապալառու/ՕԻԳ	Մեկ ստուգում շինարարության ավարտից հետո
	Եթե շինարարությունը իրականացվում է թեք մակերեսների/լանջերի վրա, ապահովել, որ իրականացվեն հակաէրոզիոն միջոցառումներ (օրինակ՝ ծառերի և այլ բուսականության պահպանման պլան, ճանապարհների և դրենաժային ցանցերի բնական կոնտուրների օգտագործում, փորված դրենաժային ջրանցքներ):	Հակաէրոզիոն միջոցառումները իրականացված են	Կապալառու	Տեղանքի պատահական /ընտրովի ստուգումներ
Զուր և Հիդրոլոգիա				
Մակերևութային ջրերի որակը	Նախապատվությունը տալ անձրևաջրերի / հեղեղաջրերի օգտագործմանը ի համեմատ մակերևութային / ստորգետնյա ջրերի ջրառքի՝ տեղում օգտագործելով բերքահավաք սարքավորումները և համակարգերը	Ջրառքը իրականացված է	Կապալառու	Տեղանքի պատահական/ընտրովի ստուգումներ

Պոտենցիալ ազդեցություն	Մեղմացնող միջոցներ	Կատարման ստուգման միջոցները	Պատասխանատվություն	Մոնիտորինգ
	Բնտենսիվ անձրևների ժամանակահատվածներում սահմանափակել փորման աշխատանքները: Օգտագործել ժամանակավոր պատնեշներ / թումբեր՝ նստվածքների, նավթի կամ քիմիական նյութերի ջրընդունիչներթափանցման ռիսկը նվազեցնելու համար	Բնտենսիվ անձրևների ժամանակ փորման աշխատանքներ չեն իրականացվում	Կապալառու	Տեղանքի պատահական /ընտրովի ստուգումներ
	Կատարել հողային աշխատանքները կտրված խրամուղիներում՝ ջրի մուտքը կանխելու համար:	Ջուրը չի մտնում հողային/փորման աշխատանքներ	Կապալառու	Տեղանքի պատահական /ընտրովի ստուգումներ
	Կրկնակի օգտագործել կեղտաջրերը, որտեղ հնարավոր է	Կեղտաջրերը կրկնակի օգտագործվել են	Կապալառու	Տեղանքի պատահական /ընտրովի ստուգումներ
Ֆլորա և ֆաունա				
Մեծ բնապահպանական արժեք ունեցող տարածքներ	Գնահատել պահպանվող տարածքների և/կամ բնական/կրիտիկական բնակավայրերի առկայությունը շինհրապարակում և դրա շուրջակայքում: Հնարավորության դեպքում խուսափել այդ տարածքներից՝ երթևեկության կառավարման և տեղանքի կարգավորման միջոցով	Բնապահպանական արժեք ներկայացնող տարածքները չեն օգտագործվել	Կապալառու/ԾԻԳ	Տեղանքի պատահական /ընտրովի ստուգումներ
Շինհրապարակի մաքրում – բուսականության հեռացում և բնական միջավայրի խախտում/անհանգստություն	Սահմանափակել բուսականության հեռացումը շինհրապարակում սահմանափակելով մինչև բացարձակապես անհրաժեշտ տարածքների	Բուսականության հեռացումը հասցվել է նվազագույնի	Կապալառու	Տեղանքի պատահական/ ընտրովի ստուգումներ
	Խուսափել հասուն ծառերի մաքրումից	Հասուն ծառերը մաքրված չեն	Կապալառու	Տեղանքի պատահական /ընտրովի ստուգումներ
	Խուսափել ճանապարհից դուրս մեքենաների երթևեկումից: Օգտագործել առկա ճանապարհները:	Ճանապարհից դուրս երթևեկությունը բացակայում է	Կապալառու	Տեղանքի պատահական /ընտրովի ստուգումներ
Լուսավորություն	Շինարարությունից հետո ապահովել հնարավորության դեպքում մաքրված տարածքների վերականգնումը օգտագործելով տեղական տեսակները:	Բույսերի վերականգնումը ավարտվել է	Կապալառու/ԾԻԳ	Մեկ ստուգում շինարարության ավարտից հետո
	Լուսավորության վահանակը թեքել դեպի ներքև՝ կողմնակի լույսի սփռումը կանխելու նպատակով: Հնարավորության դեպքում խուսափել բարձր հենարաններից	Լույսի պատճառած անհանգստությունը նվազեցված է	Կապալառու	Տեղանքի պատահական /ընտրովի ստուգումներ
Սոցիալ-տնտեսական				
Շահագրգիռ կողմերի ներգրավվածության և բողոքարկման մեխանիզմ	Ներգրավել / շփվել համայնքների հետ և պլանավորել բավարար ժամանակ մասնակցության համար: Ապահովել կայուն խորհրդատվություն տեղական իշխանությունների և համայնքների հետ շինարարության կառավարման վերաբերյալ:	Հանդիպումների արձանագրություններ Բողոքարկման մեխանիզմ	ԾԻԳ/Կապալառու	Ստուգել բողոքների մատյանը
	Հիմնել/նախաձեռնել արդյունավետ բողոքարկման մեխանիզմ՝ հնարավորություն տալով պոտենցիալ ազդակիր անձանց իրենց մտահոգությունները արտահայտելու Ծրագրի վերաբերյալ:	Բողոքարկման մեխանիզմը կա, բողոքները գրանցված են	ԾԻԳ/Կապալառու	Ստուգել բողոքների մատյանը

Պոտենցիալ ազդեցություն	Մեղմացնող միջոցներ	Կատարման ստուգման միջոցները	Պատասխանատվություն	Մոնիտորինգ
Տեղական զբաղվածություն և գնումներ	Ապահովել, որ հնարավորության դեպքում նախընտրությունը տրվի տեղական համայնքներին՝ անձնակազմի և ծրագրի համար անհրաժեշտ ապրանքների և ծառայությունների մատակարարման առումով:	Տեղական գնումների և զբաղվածության գրառումներ	Կապալառու	Վերանայել գնումների և զբաղվածության կանոնները և գրառումները
Հողերի ձեռքբերում և փոխհատուցում, ֆիզիկական տեղահանում / տնտեսական տեղահանում	Խուսափել հողերի ձեռքբերումից և ֆորմալ ու ոչ ֆորմալ սեփականատերերի/հողօգտագործողների ֆիզիկական տեղափոխությունից: Կապ հաստատել տեղական համայնքի և հնարավոր ազդակիր տնային տնտեսությունների հետ՝ հասկանալու համար հողերի սեփականության և օգտագործման հարցերը: Եթե անխուսափելի է հողերի ձեռքբերումը և տեղահանումը, նախապատրաստել հողերի ձեռքբերման և փոխհատուցման կառավարման պլան, ներառյալ վերաբնակեցման դրույթները:	Բողոքարկման մեխանիզմի գրառումները Անհրաժեշտության դեպքում՝ հողերի ձեռքբերման և փոխհատուցման կառավարման պլան		
Ազդեցություններ կենսապահովման վրա / տնտեսական տեղահանում	Տեղական համայնքի և հնարավոր ազդակիր տնային տնտեսությունների կարիքները հասկանալու համար կապ հաստատել նրանց հետ և ծրագրի միջոցով բացահայտել կենսապահովմանը վնաս հասցնելու ռիսկերը (օր. արոտավայրերի վերցնելը, ջրի հասանելիության բացակայությունը): Եթե հողերի ձեռքբերումն ու տեղահանումն անխուսափելի են, նախապատրաստել հողերի ձեռքբերման և փոխհատուցման կառավարման պլան, ներառյալ՝ ազդեցության ենթարկվող կողմերի կենսապահովման աջակցության դրույթները:	Հանդիպումների արձանագրություններ Բողոքարկման մեխանիզմի գրառումներ Անհրաժեշտության դեպքում՝ հողերի ձեռքբերման և փոխհատուցման կառավարման պլան	Կապալառու/ՕԻԳ	Բողոքների մատյանի և հանդիպումների արձանագրությունների ստուգում
Համայնքի առողջություն և անվտանգություն	Ապահովել, որ բոլոր կապալառուները կիրառեն զբաղվածության և աշխատուժի վարքագծի կանոնները (այդ թվում, անվտանգության կանոնները, թմրամիջոցների չարաշահման նկատմամբ գրոյական հանդուրժողականությունը, տարածքի բնապահպանական զգայունությունը, սեռական ճանապարհով փոխանցվող հիվանդությունների և ՄԻԱՎ / ՁԻԱՀ-ի վտանգները, գենդերային հավասարություն և սեռական ոտնձգություն, հարգանքը բնակչության տեսակետների և սովորույթների հանդեպ և ընդհանուր համայնքային հարաբերություններ):	Աշխատողների վարքագծի օրենսգիրք Բողոքարկման մեխանիզմի գրառումներ	Կապալառու/ՕԻԳ	Հարցազրույցներ աշխատակիցների հետ, բողոքների գրանցամատյանի ստուգում


Պոտենցիալ ազդեցություն	Մեղմացնող միջոցներ	Կատարման ստուգման միջոցները	Պատասխանատվություն	Մոնիտորինգ
	Հանրային իրազեկությունը բարձրացնելու համար թիրախային ցուցանակներ և տեղեկատվական միջոցառումներ կապված երթևեկության փոփոխության և հանրային ճանապարհների մեծ ռիսկային հատվածներում, այդ թվում նաև տարածքի մոտ և բեռնաթափման հատվածներում հնարավոր վտանգների հետ:	Նախագգուշացման նշաններ Հանդիպումների արձանագրություններ	Կապալառու	Ճանապարհային երթուղիների ստուգում, բողոքների գրանցամատյանի ստուգում
	Շինհրապարակում անվտանգության ծառայության աշխատակիցների առկայության դեպքում ապահովել պատշաճ ուսուցում և ուժի գործադրում և համապատասխան պահվածք աշխատողների և ազդակիր համայնքների նկատմամբ	Ուսուցման գրանցումներ	Կապալառու	Ուսուցման գրանցումների և գրանցամատյանի ստուգում
Վարակիչ հիվանդություններ	Զեկուցել աշխատողների մոտ առաջացած (վեներական, ՄԻԱՎ / ՁԻԱՀ, տուբերկուլոզ, մալարիա և հեպատիտ B և C) ցանկացած վարակիչ հիվանդությունների յուրաքանչյուր դեպքի մասին և անհրաժեշտության դեպքում ստեղծել հիվանդությունների կանխարգելման ծրագիր:	Վարակիչ հիվանդությունների գրանցամատյան	Կապալառու	Հիվանդությունների գրանցամատյանի և հիվանդությունների կանխարգելման ծրագրի (առկայության դեպքում) ստուգում
Մշակութային ժառանգություն				
Մշակութային ժառանգության վնասը	Ապահովել, որ մշակութային ժառանգության բոլոր պատահական հայտնաբերումների (օրինակ, գերեզմաններ, հին կերամիկա, հին շենքերի բեկորներ) մասին անմիջապես տեղեկացվի համապատասխան մարմնին: Հնարավորության դեպքում, խուսափել պատահական հայտնաբերումների հարևանությամբ քանդման աշխատանքներ իրականացնելուց, ցանկապատել այդ հայտնաբերումները և սպասել իրավասու մարմնի հրահանգներին:	Ուսուցման գրառումներ, գրառումներ պատահական հայտնաբերումների մասին	Կապալառու/ՕԻԳ	Տեղանքի պատահական /ընտրովի ստուգումներ

ՀԱՎԵԼՎԱԾ 3. Գյումրի քաղաքում կոյուղագծերի փոխարինման տարածքների տեղադրություն




ՀԱՎԵԼՎԱԾ 4. Շիրակի մարզի 12 գյուղերի ջրամատակարարման համակարգերի բարելավման տեխնիկական լուծումների մանրամասներ.


գ. Ախուրիկ / v. Akhurik




գ. Այգաբաղ / v. Aygabats




գ. Առափի / v. Arapi



գ. Կապ / v. Kaps



գ. Բայանդուր / v. Bayandur






գ. Երազգավորս / v. Yerazgavors






գ. Վահրամաբերդ / v. Vahramaberd



գ. Հայկափան / v. Haykavan



**ՀԱՎԵԼՎԱԾ 6. Բնապահպանական խորհրդատվությունների արձանագրություններ
և մասնակիցների ցուցակներ**

**ՀԱՎԵԼՎԱԾ 7. Բնապահպանական խորհրդատվությունների մասնակիցների
ցուցակներ**

Կլրացվի նախատեսվող հանդիպումներից հետո:

ՀԱՎԵԼՎԱԾ 8. Բողոքների ներկայացման ձևաթերթ

Մեկնաբանությունների և Բողոքների Ձևաչափ	
Անհատների համար նմուշների, բողոքների և հաշվետվությունների ձև, Տեղեկանք No.	
Ամբողջական անուն	
Կոնտակտային տվյալներ և հաղորդակցության նախընտրելի մեթոդը Խնդրում ենք նշել նախընտրելի կապի միջոցը (էլ. փոստ, հեռախոս, փոստ):	☐ Փոստով՝ խնդրում ենք տրամադրել փոստային հասցե: _____ _____ _____ _____ ☐ Հեռախոսով՝ _____ ☐ Էլեկտրոնային փոստով՝ _____
Միջադեպի կամ բողոքի նկարագրությունը Ի՞նչ է պատահել: Ո՞րտեղ է պատահել: Ու՞մ է պատահել: Խնդրի հետևանքը ո՞րն է:	
Միջադեպի կամ բողոքի ամսաթիվը	
☐ Մեկ անգամվա միջադեպ/բողոք (ամսաթիվ _____) ☐ Պատահել մեկից անգամից ավել (քանի անգամ _____) ☐ Ընթացիկ (խնդիր, որ ներկա պահին ընթացքի մեջ է)	
Ի՞նչ կցանկանայիք տեսնել որպես խնդրի լուծում:	

ՀԱՎԵԼՎԱԾ 9. Բողոքների գրանցման մատյան

Մարզ, համայնք, ծրագիր _____

Բողոքի հ/հ	Բողոքի ստացման ամսաթիվ	Բողոքի ներկայացման ձևը (անձամբ, հեռախոս, նամակ, ինտերնետ, այլ)	Բողոքի բնույթը (խնդրի նկարագրություն)	Ինչպես է լուծվել բողոքը / մեղմացնող գործողություն	Բողոքի լուծման կարգավիճակ*	Բողոքարկողի կողմից հետևողականություն ցուցաբերվե՞լ է խնդրի լուծման ընթացի վերաբերյալ Այո / Ոչ	Նշումներ
1.							
2.							
3.							
4.							
5.							
6.							
7.							
8.							
9.							
10.							
11.							
12.							

* «Ընթացքում է» կամ «Լուծված է» (եթե լուծված է, նշել ամսաթիվը)